

Մ Ա Ս Ի Ս

ՇԱԲԱԹ ԱԹԵՐԹ

Ա.Զ.Գ.ԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

34-րդ ՏԱՐԻ

1885 ԴԵԿՏԵՄԲԵՐ 7

ԹԻԻ 3799

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՇԱԲԱԹ 7 ԴԵԿՏԵՄԲԵՐ

Ա.Զ.Գ.ԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆՈՐ ՑՈՅՑ ՄԸ

Նշանակութեան արժանի է այն լաւագոյն յարաբերութեանց ցոյցն զոր Կառավարութիւնն ըրաւ բարոյապէս վարձատրելով Կարնոյ Առաջնորդն զԳեր. Մաղաքիա վարդապետ Օրմանեան եւ այլ մի քանի եւ կեղեցականներ շքանշաններու նուէրովն :

Օսմանեան Կառավարութեան ներկայ քաղաքական ծանր եւ փափուկ վիճակին մէջ՝ երբ Հայ ժողովրդեան Առաջնորդներն այսքան փտահոլութիւն կը ներշնչեն, այսպիսի վիճակ մը պէտք չէ վրիպի մեր ուշադրութենէն ինչու որ այսու յայտնի կ'ըլլայ այն բացառիկ դրութիւնն որոյ մէջ ենք հանդէպ իշխող Պետութեան : Հայ ժողովուրդն միշտ ուրախ կ'ըլլայ, միշտ գոհ կ'ըլլայ տեսնելով թէ գաւառաց մէջ կրօնական եւ ազգային գլուխներն կը յարգուին, կը պատուին եւ կը վարձատրուին իրենց պաշտօնն աշխուրջ ու խելացի կերպիւ կատարած ըլլալուն համար :

Գաւառական Առաջնորդի մը համար բաւական չէ եկեղեցւոյ բեմէն ազդու քարոզներ խօսիլ, բաւական չէ կրօնական գործերն խղճի մտօք գործադրել, բաւական չէ ազգային վարժարաններու եւ ներքին գործերու լաւ հսկել : Գաւառական ժողովուրդը երբ տեղական կառավարութեան հետ գործ մը կ'ունենայ, Առաջնորդին ազդեցիկ եւ ճարպիկ միջամտութենէն կախում ունի ըս-

տէպ իրաւանց արդար բաշխումը : Եւ ինչպէ՞ս Առաջնորդն կրնայ հաշտ պահել իշխող կառավարութեան եւ իւր հօտին շահերն միանգամայն, եթէ ոչ երկուքէն ալ ինքզինքն յարգել տալով եւ ըստ բաւականին իւր պաշտօնին համեմատ կշիռ ունենալով :

Ահա՛ այդ օգտակար ազդեցութիւնն ու նեցան եւ ասկէ վերջ եւս առաւել պիտի ունենան այն Առաջնորդք որք տեղական կառավարութեանց ըով պիտի ներկայանան վարձատրեալ ի Կեդր. Կառավարութենէ եւ կայսերական նուէրին բոլոր օգուտը պիտի վայելէ տեղական Հայ ժողովուրդն : Վարժարանի խնդիր, կալուածական խնդիր, տուրքի խնդիր, հազար տեսակ խնդիրներ կը ծագին յորում անտէր եւ անօգնական գիւղացին ո՛չ այլ որ կը գտնէ զինքը պաշտպանող եթէ ոչ տեղւոյն Առաջնորդն : Եւ եթէ սա չյարգուիր, եթէ յաջս տեղական իշխանութեան նա չունի կարեւորութիւն մնասը ակներեւ է :

Ուրախ ենք տեսնելով որ շնորհիւ Ս. Պատրիարք Հօր, որ երկարատեւ փորձառութեամբ լաւ կը ճանչնայ գաւառացի ժողովրդեան պէտքերն՝ Առաջնորդաց վիճակն օր աւուր կը բարձրանայ, նոցա լաւագոյններն կը վարձատրուին եւ արժանիքն կը գնահատուին :

Ուրախ ենք նա մանաւանդ տեսնելով որ Ազգային Վարչութեան կանոնաւոր կազմակերպութեան մի արդիւնքն է այս քաղաքական ծանր պարագայից մէջ օր աւուր Կառավարութեան եւ Ազգային Վարչութեան յարաբերութեանց բացառիկ կերպիւ բարեորումն որոյ ապացոյցներէն մին է այս վերջին Կայսերական շնորհն, ինչպէս մին եղաւ Կաթողիկոսական խնդրոյ առթիւ խը-

առվարաբարաց ոմանց զուր ջանքերուն ապարդիւն ելին :

Եւ չենք զարմանար բնաւ , որ ազգին մեծամասնութիւնն որոյ ներկայացուցին է Ազգային ժողովոյ Երեսփոխանաց մեծամասնութիւնն՝ հարկ անհրաժեշտ կը տեսնէ Կ. Պոլսոյ Պատրիարքական Դահլուճ վրայ սահել զՅարութիւն Սրբազան , հակառակ ոմանց խռովարարաց որք նոր խնդիրներ յարուցանելով պղտոր ջրոյ մէջ որսալու տրուածեալ կ'ուզեն անկանոնութեան եւ խառնաշփոթութեանց ժամանակներն ունենալ զնա հեռացնելով այս տեղէն :

Յուսանք թէ նոցա ջանքերն այնքան ի դերեւ պիտի ելլեն որքան ելան Կաթողիկոսական խնդրոյ առթիւ :

ՀԱՆԴԵՍ ՕԾՄԱՆ

ՎԵՀԱՓԱՌ

ՄԱԿԱՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Վերջապէս բարեբաղդութիւն կ'ունենանք Կաթողիկոսի մը , Հայաստանեայց Եկեղեցւոյ Գերագոյն Պետին օծման հանդէսին նկարագրութիւնն ընելու մեր ընթերցողաց : Կաթողիկոսական գահն կը մերկանայ իւր սգոյ քօղէն , Եջմիածնայ լին Վեհարանը կը լցուի կեանքով ու խանդով , եւ նոր Հայրապետ մը , նոր ոյժերով զօրացեալ , կուգայ մեզ մոռցնել երեքամեայ տագնապի մը ամեն դառնութիւններն ու ցաւեր :

Վեհ. Մակար Կաթողիկոսի Օծման հանդէսը տեղի ունեցած է նոյեմբեր 10 ին : Հայաստանեայց Եկեղեցւոյ այդ գերագոյն պաշտաման նկարագրութիւնն ընելէ առաջ , պատմենք Վեհ. Հայրապետին բնակութիւնն ի Թիֆլիզ եւ անտի ուղեւորութիւնն եւ ժամանումն Եջմիածին : Քիչնեւէն ի Թիֆլիզ ուղեւորութեան նկարագրութիւնն ըրած ենք նախորդ թուով մը :

Ինչպէս կը յիշուի , Վեհ. Հայրապետն հոկտեմբեր 11 ին հասաւ ի Թիֆլիզ , անդ գտնելով հանդիսաւոր եւ չքեղ ընդունելութիւն մը թէ՛ տեղական իշխանութեանց եւ թէ՛ Հայոց կողմանէ : Ըստ Առջաբանի ,

«Վեհափառ շատ փոքր է փոխուել . իւր 74 ամեայ մեծ հասակից շատ պակաս է երեւում . ինքը առողջ , դէմքի գոյնը միանգամայն առողջ եւ նոյն ինքնատիրապետութեան արտայայտութիւնն ունի , որ միշտ նորա յատկանիւն է եղած : Թէեւ մեծամեծ հոգսեր ինչպէս երեւում է զբաղեցնում են նորան , բայց զիջողական ժլպիտը աւելի յաճախ է փայլում նորա ծանրաստի դէմքի վրայ : Խօսակցութիւնը եւ յայտնած կարծիքները մի հաստատուն որոշ աշխարհայեցողութեան բնութիւնն են կրում» — Ն. Վեհափառութիւնն հոկտեմբեր 21 ին ընդունեց Ներսիսեան դպրանոցի հոգաբարձութիւնն , 22 ին այցելեց Թիֆլիզի բոլոր հայ եկեղեցիները , 23 ին ընդունեց Հայոհեաց Բարեգործական եւ Կովկասի հայոց Բարեգործական ընկերութեան ներկայացուցիչներն , 24 ին այցելեց Ներսիսեան դպրանոցն , ուր չքեղ հանդէս մը կարգադրուած էր : Վեհ. Հայրապետն ամենուրեք առիթ կը գտնէր իւր ներհուն խօսքերով ու քաջալերական խրատներով հիացնելու եւ խանդավառելու իւր ունկընդիրները : — Հոկտեմբեր 25 ին հրաժեշտ տուաւ Թիֆլիզի եւ , ընկերակցութեամբ հրաւիրակ Սրբազանաց , Սուբիաս եւ Արխատակէս եպիսկոպոսաց , Սինոդի Պրօկուրորին եւ զօրավար Ամբարդանեանի , հետեւեալ օր ժամ 3 ին հասաւ Աղսթաֆայի կայարանն , ուր ընդ առաջ ելան Գանձակի հայ ժողովրդեան եւ հոգեւորականութեան ներկայացուցիչներ եւ Ղազարի գաւառապետ իշխան Թարխանով , որ Գանձակի նահանգապետի կարգադրութեամբ ուղեկցեցաւ Վեհ. Հայրապետին մինչեւ իւր գաւառի սահմանն : Այսպէս , ճանրուն վրայ ամեն կայարաններն , մինչեւ Երեւան , Վեհ. Կաթողիկոսը գտաւ ամենաջերմ ընդունելութիւն : Հայ գիւղացիներ , ծերունիներէն մինչեւ մանուկներ , խուռներամ եւ գունդագունդ կը վազէին տեսնելու համար իրենց Հայրապետն եւ Նորին աջն համբուրելու : Յաճախ Ն. Վեհափառութիւնը կանգ կ'առնուր գիւղի մը մէջ , ուր գեղջիկական համեստ ճաշ մը պատրաստուած էր , եւ ուր գիւղին քահանան եւ առնդադին խօսքերով կը շնորհաւորէր Նորին գալուստը : Այլուր , արք եւ կանայք , ծերք

եւ տղայք վաղն ի վաղ կը հասնէին Նորին կառքին ետեւէն, եւ Վեհ. Հայրապետն, հակառակ դժնդակ օդին, գաղթեցնել կուտար կառքին արշաւասոյր ընթացքն եւ կ'օրհնէր զայնս «Պահպանիչ»ով: — Վեհ. Կաթողիկոսն ամենուրեք կը խօսէր իմաստալից ճառեր, որոց նիւթը կը կազմէր մեծ մասամբ դպրոցական խնդիրն, Ռուսահայոց սրտին այդ կսկծալի վէրքն որ տակաւին կ'արիւնէր: Եւ ամենուրեք հայ ժողովուրդն, ի տես իւր հոգեւոր պետին, կ'աղօթէր ծուռն զրաժ, կը խաչակնքէր երեսն եւ ուրախութեան յորդ արցունքներ կը թափէր: — Հոկտեմբեր 28 ին, Վեհ. Հայրապետը, ձիաւորաց եւ կառքերու ահագին բազմութեան մ'ուղեկցութեամբ, չքեղ եւ փառաւոր կերպիւ մտաւ Երեւան, որոյ բոլոր տունները զարդարուած էին գոյնզգոյն դրօշակներով եւ գորգերով: Ընդ առաջ ելած էր Երեւանի քաղաքապետ Պ. Գեղամեանց՝ քաղաքային խորհուրդի հայ եւ մահմետական անդամներով, որ մերձեանալով Ն. Վեհափառութեան, գեղեցիկ եւ սրտառուչ ճառով ողջունեց Նորին շնորհաբեր մուտքը: Երբ թափօրն հասաւ մեծ հրապարակն, ուր շինուած էր գեղեցիկ կամար՝ դոյնզդոյն ծաղիկներով, տերեւներով եւ ծառատունկերով զարդարուն, որոյ մէջտեղ կար «Մ» սկզբնատառը, Վեհափառն իջաւ կառքէն: Անդ զգեստաւորեալ կ'սպասէին քաղաքին հոգեւորականաց դասը, Գալիանեան օրիորդաց դպրոցի աշակերտուհիք ծաղկեփունջեր ի ձեռնն, եւ անթիւ բազմութիւն հայ եւ օտարազգի բնակչաց որք լցուած էին մեծ հրապարակի, շրջակայ տանց եւ ծառոց վրայ: Անմիջապէս Վեհափառն հագաւ չուրջաւ, հոգեւորական դասն սկսաւ երգել «Հրաշափառ Աստուած» շարականն եւ այդպիսի չքեղ ու հանդիսաւոր գնացքով մտաւ Ս. Սարգիս Մայր Եկեղեցին, ուր Երեւանայ Առաջնորդն կարգաց ազգու եւ իմաստալից ճառ մը, որուն պատասխանեց Ն. Վեհափառութիւնն:

Նահանգապետի հետ իւր տեսակցութիւնը վերջացնելէ յետոյ, Վեհ. Մակար Սրբազանը թողուց Երեւանն եւ ձանապարհ ինկաւ դէպի Ս. Էջմիածին, իւր ուղեկիցներով: Գնացքի առջեւէն կ'երթային տասն

հեծեալ զինուորներ, եւ նոցա ետեւէն՝ ձիաւոր քահանաներ. երկու ձիաւոր վարդապետներ կը կրէին խաչն ու դաւաղանը. ապա, քառաձի կառքի մէջ՝ չաթիրներով՝ Վեհ. Հայրապետը, եւ վերջապէս Նորին ուղեկիցը: Ճանապարհի վրայ, հայ դիւղացւոց կողմէ նոյն ջերմեռանդ ոգեւորութիւնն: Երեւանի եւ Էջմիածնի գաւառաց սահմանի վրայ ընդ առաջ ելաւ Էջմիածնի գաւառապետ Խան-Աղեան, բազմաթիւ հայ եւ օտարազգի ձիաւորներով, եւ գնացքը հասաւ վերջապէս Վաղարշապատ եւ Գէորգեան ձեմարանի առջեւ հրապարակին մէջ կանդ առաւ: Հաւաքուած յողմախուռն ամբոխն օդը թնդացուց «Կեցցէ» ներով: Միաբանութիւնն եւ ձեմարանի աշակերտք իրենց ուսուցիչներով ընդ առաջ ելան երգասացութեամբ. երկու վարդապետ կը խնկարկէին եւ երկու վարդապետ առջեւէն կը տանէին կաթողիկոսական քօղը: Էջմիածին ողջոյն զարդարուած էր պճնագեղ: Մի քանի քովէ յետոյ ամենքը մտան Տաճար: Անդ, Վեհ. Հայրապետը ծնրադրեց եւ աղօթեց: Ապա, բազմեցաւ, եւ ընդհանուր լուսթեան մէջ, Երեմիա եպիսկոպոս ողջունեց Նորին դալուստը: Վեհափառը, օրհնէնքով մը պատասխանելէ յետոյ, գնաց Վեհարան, ուր ձեմարանի աշակերտք կ'երգէին քաղցրալուր: — Գիշերը տեղի ունեցաւ փառաւոր լուսավառութիւն եւ հրախաղութիւն: Էջմիածին համակ կը փայլէր լուսաղող: Տաճարի հայակապ եւ քանդակագործ դանդակատան ճակտին կը փայլէր «Կեցցէ Մակար Կաթողիկոս ամենայն Հայոց»: — Հետեւեալ օր, Վեհափառն ներկայացան Միաբանութիւնը, Էջմիածնի աշակերտք եւ ուսուցիչք, եւ բազմաթիւ ժողովուրդ:

Ինչպէս ըսինք, նոյեմբեր 10 ին կիրակի օր տեղի ունեցաւ Վեհ. Մակար Կաթողիկոսի օծման հանդէսը: Շաբաթ երեկոյէն անհուն բազմութիւն մը, շրջակայ գիւղերէն, Վաղարշապատէն եւ Երեւանէն, կը գրուէր Ս. Իջման տեղին: Երբ երեկոյեան ժամերգութիւնն սկսաւ, Մայր աթոռի Միաբանութիւնը զգեստաւորուած, խաչերով, խաչվառներով եւ եկեղեցական զարդերով գնաց Վեհարանի դրան մօտ, ուսկից Վեհ. Հայրապետն առնելով գնացին տաճար:

Հետեւեալ առաւօտ, երբ ժամերգութիւնն սկսաւ, անհուն ամբոյս մը լցուցած էր եկեղեցին, դաւիթը եւ շրջակայքը, եւ շերմեռանդութեամբ կը դիտէր իւր առաջ պարզուող վեհօր տեսարանը: Ներկայ էին նաեւ Երեւանի նահանգապետը եւ քաղաքապետը, բաղնիքի ռուս աստիճանաւորներ եւ օտարազգիներ: — Զինուորաց կարգերն հազիւ կը յաջողէին ժողովուրդը դսպել:

Վերջապէս տիրեց անդորրութիւնն, երբ Վեհ. Հայրապետը բարձրացաւ աւագ սեղանն, ի միասին եւ տաններկու եպիսկոպոս, Մկրտիչ, Մեսրոպ, Արիստակէս, Գէորգ, Թադէոս, Ներսէս, Գրիգոր, Սերովբէ, Յովակիմ, Երեմիա, Սուքիաս եւ Գրիգորիոս, որք պիտի կատարէին Օծումը: Կանոնադրեալ ընթերցմունք լինելէ յետոյ, Մկրտիչ Արքեպիսկոպոսն առաւ Միւռոնի Աղանին եւ կանգնելով Վեհափառի մօտ թափեց միւռոնը Նորա դադաթի վրայ երեք անգամ, ամենուն հետ միասին ըսելով « Առաքելայ Աղանոյ », « Աննիւթական Աղանի » եւ « Օրհնութիւնն ի բարձունս » շարականներն: Ապա տասն եւ երկու եպիսկոպոսունք եւս ի միասին հայրապետի դադաթի վրայ հեղեալ միւռոնն օծեցին եւ միաբերան երգեցին « Օրհնեսցի, օծցի եւ սրբեսցի դադաթ Վեհ. Մակար Կաթողիկոսի » եւ Մկրտիչ Արքեպիսկոպոսն, Աւագ լուսարարէն առնելով Հայրապետական սպիտակ քօղը, ձգեց Վեհ. Հայրապետին գլուխը, կապեց Նորա գօտիէն Հայրապետական կոնքեռը եւ ձեռքը տուաւ Հայրապետական գաւազանն: Այդ րոպէս ամենէն հանդիսաւորն է հայկական եկեղեցւոյ ծիսակատարութեան մէջ: Եպիսկոպոսը կարգով կը մօտենային եւ կը համբուրէին Ն. Ա. Օծութեան աջն եւ դադաթը: Օծման արարողութենէն յետոյ, Վեհափառը շարունակեց Պատարագի խորհուրդը: — Երբ Ն. Վեհափառութիւնը քաջուեցաւ Վեհարան եւ բազմեցաւ կաթողիկոսական գահուն վրայ, ամեն ներկայը մատչեցան ի համբոյր Նորին. Ա. Աջոյն, եւ Պ. Պրիբիլ՝ Տոնաւորութիւն իշխանին կողմէ շնորհաւորեց Կաթողիկոսի բարձրանալն Լուսաւորեցալ գահուն վրայ, մինչ դուրսը նուազածուաց խումբը կը հնչեցնէր եւրոպական եւ ռուսական եղանակներ:

Ըստ սովորութեան, երեկոյն շքեղ հացկերոյթ մը տրուեցաւ Միաբանութեան սեղանատան մէջ: Սեղանին վրայ, Վեհ. Կաթողիկոսը, խոր լուսութեան մէջ, շամբաների բաժակը ձեռքին, ոտք ելաւ եւ բաժակը պարսեց ի սլափա Ռուսաց կայսեր: Պ. Պրիբիլ եւս ոտք ելնելով, Կովկասի կառավարչապետի կողմէ բաժակ առաջարկեց Ն. Ա. Օծութեան: Այս երկու բարեմաղթութիւնք ընդունուեցան երկարատեւ կեցցէներով:

Հետեւեալ օր, հիւրոյ մեծ մասը հրաժեշտ տուին Էջմիածնի: Առաջնորդներն հրաման ստացան իրեն տեղերը դառնալու: Մեկնեցաւ նաեւ Պ. Պրիբիլ, որուն մինչեւ ի կառք ուղեկցեցաւ Սուքիաս եպիսկոպոս: Էջմիածին տակաւ առ տակաւ կ'ստանայ իւր անդորր վիճակը, սպասելով որ Նորահաստատ Հայրապետին գործունէութիւնք դան նոր ոգի եւ կեանք տալ ամենայնի:

ԶԱՓԱԳԻՏԱԿԱՆ

ՆՈՐ ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՄԷ

Թ Ի Ի Գ Ի Ե Լ

Այս նոր թուարանութեան մէջ երկուքը այն զօրութիւնն ունի զոր տասն ունի տասնորդական դրութեամբ:

Իբր առաջին կենսական հետեւութիւն այս սկզբան՝ կը տեսնենք թէ, կրկնորդական դրութեամբ փոխանակ գրելու

0, 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10.
բաւ է գրել

0, 1, 10.

Ի սպառ ջնջուած են 2, 3, 4, 5, 6, 7, 8 եւ 9 թուանշանները, զի ասոնց դոյութեան պէտք չկայ (1):

Եւ քանի որ նոր դրութեամբ 10 գրելով 2 կը հասկնանք՝ 100 գրելով 4 պիտի հասկնանք, 1000 գրելով 8 պիտի հասկը-

(1) Ահա այս տարօրինակ յատկութիւնն է որ ոմանց ըսել տուած է թէ միութեամբ եւ ոչնչութեամբ կարելի է բոլոր քանակութիւնները նշանակել:

նանք $\overline{10}$: Եւ ընդհանուր կերպիւ որ եւ իցէ թիւ մը գրելու համար միայն 1 եւ 0 պիտի գործածենք ⁽¹⁾ :

Շինենք ուրեմն հետեւեալ ցուցակն որով գաղափար մը արուի երկու գրութեանց մէջ մի եւ նոյն թուոյն գրուելու եղանակին .

ՏԱՍԵՈՐԴԱԿԱՆ ԴՐՈՒԹԵԱՄԲ	ԿՐԿՆՈՐԴԱԿԱՆ ԴՐՈՒԹԵԱՄԲ
0	կը գրուի 0
1	» 1
2	» 10
3	» 11
4	» 100
5	» 101
6	» 110
7	» 111
8	» 1000
9	» 1001
10	» 1010
11	» 1011
12	» 1100
13	» 1101
14	» 1110
15	» 1111
16	» 10000

Եւ այսպէս կը շարունակուի :

Ենթադրենք թէ 25 դրել պէտք ըլլայ : Այս թիւը նոր գրութեամբ գրելու համար կը գիտեմք թէ

$$25 = 1 + 8 + 16$$

Որ ըսել է, ըստ վերոյիշեալ ցուցակի, նոր գրութեամբ .

$$1 + 1000 + 10000 = 11001$$

Ընդհանուր կերպիւ՝

ԿԱՆՈՆ . — Տասնորդական գրութեամբ գրուած թիւ մը կրկնորդական գրութեամբ գրելու համար, հարկ է այն թիւը 2 ի զանազան կարողութեանց գումարի մը վերածել, միութիւն մը զատ գրելով եթէ անդդգ է : Ապա այդ մասանց տեղ գրել 2 ի զանազան կարողութեանց համարժէք թեւերն կրկն . գրութեամբ որք միաւորէ մը վերջ գրուած զերօններէ կը բաղկանան եւ ասոնք միացնելով իբր մէկ թիւ գրել :

Այս գործողութիւնը շատ կը դիւրանայ

(1) Երկու գրութիւնները չլիթիւր համար տարբեր տեսակ թուանշան կը գործածենք :

եթէ հետեւեալ տախտակն աչաց առջեւ ունենանք .

2 ¹ կամ	2 կը գրուի	10
2 ² »	4 »	100
2 ³ »	8 »	1,000
2 ⁴ »	16 »	10,000
2 ⁵ »	32 »	100,000
2 ⁶ »	64 »	1,000,000
2 ⁷ »	128 »	10,000,000
2 ⁸ »	256 »	100,000,000
2 ⁹ »	512 »	1,000,000,000
2 ¹⁰ »	1024 »	10,000,000,000
2 ¹¹ »	2048 »	1 եւ 11 զերօ
2 ¹² »	4096 »	1 եւ 12 »
2 ¹³ »	8192 »	1 եւ 13 »
2 ¹⁴ »	16384 »	1 եւ 14 »

$\overline{10}$ $\overline{10}$ $\overline{10}$:

Այս նոր գրութեան միակ անպատեհութիւնն աստ ակներեւ կ'ըլլայ . արդարեւ 128 էն մեծ թիւ մը գրելու համար եօթն թուանշանէն աւելի պէտք է, թէպէտեւ այդ թուանշաններն մէկ կամ զէրօ են եւ ոչ այլ ինչ :

Բայց այս անպատեհութիւն, որ դիւսաւոր է, նոր գրութեան միակ թերութիւնն է հնոյն նկատմամբ : Եւ ինչպէս որ վերջէն պիտի տեսնուի, շորս գործողութեանց մասին այնպիսի դիւրութիւններ պիտի ընծայէ որով կրկնորդական գրութեան դիւրութիւնները թերութեան կը հաւասարակըին :

Թիւ գրելու օրինակներ :

Գրել 300 թիւը :

Վերոյիշեալ տախտակէն կը տեսնեմք թէ 300 էն անմիջապէս փոքր 256 կայ . մնացորդ 44 էն անմիջապէս փոքր 32 կայ եւ ապա 8 եւ 4 :

Որոյ համար կը գրեմք

$$300 = 256 + 32 + 8 + 4$$

կամ

$$300 = 2^8 + 2^5 + 2^3 + 2^2$$

Եւ ըստ որում 2ը գրելու համար 10 պիտի գրուի, ուրեմն 300ը կը գրուի

$$10^8 + 10^5 + 10^3 + 10^2 = 100,101,100$$

Ուրիշ օրինակ .

Թող հարկ ըլլայ նոր գրութեամբ գրել 9999

Հետեւեալ կերպիւ կը գտնեմ, դիմելով վերոյիշեալ տախտակին,

կը գրեմ	9999
կը զեղչեմ	8192 = 2 ¹³
կը մնայ	1807
կը զեղչեմ	1024 = 2 ¹⁰
կը մնայ	783
կը զեղչեմ	512 = 2 ⁹
կը մնայ	271
կը զեղչեմ	256 = 2 ⁸
կը մնայ	15
կը զեղչեմ	8 = 2 ³
կը մնայ	7
կը զեղչեմ	4 = 2 ²
կը մնայ	3
կը զեղչեմ	2 = 2 ¹
կը մնայ	1

ըսել է

$9999 = 2^{13} + 2^{10} + 2^9 + 2^8 + 2^3 + 2^2 + 2^1 + 1$
որով 9999 ը նոր դրութեամբ կը գրուի
10,011,100,001,111

Ձարմանալի հետեւութիւն մը կրնանք հանել այս մի քանի սկզբնական նկատողութիւններէ. հետեւութիւն որ թուոց թըւաբանական մի կարեւոր յատկութիւնն կը յայտնէ: Արդարեւ, քանի որ ամեն թիւ թէ՛ կրկնորդական դրութեամբ և թէ՛ տասնորդական դրութեամբ գրելն կարելի է, ինչու որ չկայ պատճառ մը որ այդ անկարելի ըլլայ, ուրեմն առն թէ՛ կրնայ վերածուիլ 2ի զանազան կարողութեանց գումարի մը, (առնել 1 եւ թէ անպիտան է):

Այս յատկութիւնն չափազանցութեան մէջ կրնայ ապացուցուիլ. բայց ներկայ ապացուցութեան գեղեցկութիւնը կը կայանայ պարզութեանը մէջ, ինչու որ եւ ոչ մի կերպով թէ՛ բնական ուսուցումած ատեն նմանօրինակ յատկութիւն մը կրնայ ապացուցուիլ:

Արդէն յառաջիկային պիտի գտնենք այնպիսի նոր յատկութիւններ զորս սովորական դրահաշուով ապացուցանելն երկար եւ դժուար է:

Տարբեր խնդիր մը եւս կը ներկայանայ մեզ թիւ դրելու առթիւ:

ԽՆԴԻՐ. — Թիւ մը որ կրկնորդական դրութեամբ գրուած է՝ վերածել տասնորդական դրութեան:

Չորօրինակ 101010111 թիւն գրուած համարիմ:

Գիտեմ թէ,

$$101010111 = 100,000,000 + 1000000 + 10000 + 100 + 10 + 1$$

եւ կամ

$$101010111 = 10^8 + 10^6 + 10^4 + 10^3 + 10 + 1$$

եւ ըստ որում 10 հին դրութեամբ 2 ըսել է՝ այս թիւը հաւասար է $2^8 + 2^6 + 2^4 + 2^3 + 2 + 1$ ի, որով վերոյիշեալ ցուցակէն

$$2^8 = 256$$

$$2^6 = 65$$

$$2^4 = 16$$

$$2^3 = 8$$

$$2 = 2$$

$$1 = 1$$

գումար 343

Ուրեմն 343 է տասնորդական դրութեամբ 101010111 ին համարժէքը:

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ. — Տասնորդականէն ի կրկնորդական եւ իրիսադարձ կերպիւ թիւերու վերածումն բաւական երկար գործողութիւն մ'է, ինչպէս որ վերեւ տրուած օրինակէն կը տեսնուի, մանաւանդ երբ երբ թիւերն մեծ են: Սակայն պէտք է գիտնալ թէ շատ քիչ անգամ հարկ կը ըլլայ մէկ դրութեանէն միւսն անցնիլ. Տեսականին մէջ գրեթէ բոլորովին տասնորդականը դանց առնել կարելի է երբ նոր դրութեան վրայ կը հիմնենք հաշիւ մը, որպէս թէ այդ դրութիւն դոյութիւն իսկ չունենար. ինչպէս որ տասնորդական դրութեամբ կըրնանք ամեն ինչ կատարել առանց կրկնորդականին դոյութիւնն նշմարելու:

Արդէն տասնորդականէն ի կրկնորդական վերածման առելի պարզ կանոն մը պիտի կարենամ տալ երբ գումարի գործողութիւնն բացատրեմ: Նոյն իսկ գումարի գործողութիւնն այնքան արդիւնաբեր պիտի ըլլայ որ յառաջատուութեամբ հաշիւ լուծելի խնդիրներ գումարելով պիտի կարենանք ապացուցանել:

Յ. ԵՈՒՍՈՒՖԵԱՆ

(Շարահանէլ)

ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ

ԳՈՐԾԱԿՑԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Օտարագլխի եւ ազգային լրագրութիւնք. — Առաւել ընդարձակ պարտականութիւնք վերջնայն. — Տնտեսագիտութիւնը մեր վարժարանաց մէջ. — Պէտք չէ որ տնօրէնք վերաւորուն — խառն լրոց կարեւորութիւնը մեր մէջ. — Անտարբերութիւն մեր գրագիտաց. — Օժանդակութիւն ազգային լրագրաց. — Խնայողութիւն. — Իմաստուն մարդիկ. — Ագահք. — Վարչութիւն, Գրասնագիտութիւն եւ Աշխատութիւն. — Գործակցութիւն. — Գործակցութիւնք արտադրման սպառման եւ վարկի ընթացք գործակցութեան իյ՝Անգլիա Ռօքսէյլի եւ Ռահվիւայք ֆելատելֆիոյ արուեստական ընկերութիւնք:

Եթէ քաղաքակրթեալ ազգաց մէջ հանրային կարծեաց զանազանութիւնն է որ կ'ապահովէ զանազան կարգէ օրագրաց կամ հանդիսից գոյութիւնը, պէտք չէ կարծել թէ այն երկիրներու մէջ ուր գիտութիւնը ըստ բաւականի ընդհանրացած չէ, ուր հաստատուն եւ ողջ սկզբունքներ դեռ վանած չեն արմատացեալ աւելորդ սպառնութիւններ եւ թիւր գաղափարներ, ներքին ըլլալ լրագրաց միմիայն ընդհանուրին վերաբերեալ նիւթերով զբաղեցնել ընթերցողներն, որք գրեթէ անտարբեր են տակաւին այն տեսակ խնդիրներու զոր ժամանակ ժամանակ կ'ընթեռնուն առանց գնահատելու անոնց արժէքն եւ կարեւորութիւնը:

Հետեւաբար կրթել հանրային կարծիքը, ճշմարիտ սկզբունքներով սնուցանել զայն եւ տալ անոր ուղիղ ընթացք մը. միով բանիւ, գաղափարաց հոգածութիւն սպառնալուն պէտք չէ այնչափ անտեղի եւ անյարմար լինի ազգային լրագրաց, երբ նկատենք թէ ասոնց նպատակը չէ սպառնալուն այսինչ կամ այնինչ քաղաքական եւ գիտական կուսակցութեանց եւ ակմբոց իրաւացի կամ անիրաւ վարդապետութիւնները, ինչպէս կը տեսնենք եւրոպական ուրիշ ազգաց մէջ: Մեր ազգային լրագրաց պարտականութեան էն դուրս պէտք չէ ըլլայ, կ'ըսեմ, նպատակ իւրաքանչիւր անհատի դաստիարակութեան, առանց մեղանշելու իւր կոչման դէմ որ է սպառնալուն երկրին եւ ազգին ընդհանուր շահերը:

Բայց այն ծառայութիւնները զորս կ'աւելնկալենք ազգային մամուլէն, մեր դրպրոցները միթէ մեզ չե՞ն նուիրեր. ապեւրատութիւն չը՞լլար անտես ընել այն օգուտները զորս ազգը ձեռք կը ձգէ հազար զրկումներով:

Անտարակոյս. զի իրողութեանց, մանաւանդ խղճի հակառակ կ'ըլլայ ուրանալ այն բիւրաւոր բարիք որ թանկագին արդիւնք են անհատական եւ հանրային դառնալ-խառն ճգանց:

Բայց, եթէ մեր դպրոցները նպատած են եւ անդադար կը նպաստեն կարգ մը գիտութեանց ծաւալման, միւս կողմանէ այն արդիւնք զոր կը նուիրեն ուրիշ ամենակարեւոր ճիւղի մը մէջ, խիստ սահմանափակ է բաղդատմամբ առաջնոց մէջ արտադրուած արդեանց: Մեծ գոհունակութիւն է տեսնել թէ արեգական եւ լուսնի խաւարմունք մեր մէջ առ հասարակ առանց դժուարութեան կը բացատրուին եւ թէ աւելի առիթ ունինք դիտելու վաղեմի այլանդակ գաղափարաց ծաղրուիլը քան սլաշտպանութիւն. պարագայ մը՝ որ մեծ նշանակութիւն ունի զի անգամ մ'որ գաղափարներ իրենց ժամանակն անցնելով ծաղու կ'ենթարկուին, նշան է թէ մօտակայ է այն ապագայն յորում միանգամ ընդմիշտ պիտի անհետանան:

Արդարեւ մեր դպրոցներ բնական եւ չափական գիտութեանց մէջ միջոց կը հանդիսանան իրենց հաւասար օտարագլխի վարժարանաց, եւ եթէ բարոյական եւ քաղաքական գիտութեանց կարգէն ամենակարեւոր գիտութեան մը ծաւալման համար ազգային լրագրութեան գործակցութեանը կը դիմենք, պէտք չէ որ մեր վարժարանաց խնամակալը կամ տնօրէնք վերաւորուն, զի ասոնք բաղդատաբար խիստ փոքր չըջանակի մը մէջ կը ջանան մտքերէն արմատախիլ ընելու կարգ մը հակադիտական սկզբունքներ, որպիսիք են առեւտրոյ հաւասարակշռութիւնը, սպառնալուն դրութիւնը, եւ ասոնց տեղ հաստատելու ճշմարիտ եւ օգտակար սկզբունքներ, ուսուցանելու հարստանալու արդար միջոցները, խնայողութեան տարբեր եղանակները և:

Ձգուշանանք միայն խաբուելէ կարծելով որ մեր դպրոցներու պակասը լրագրու-

թիւնը կարենայ ընուլ կատարելապէս, զի այս վերջնոյն յաջողութիւնը կախում ունի ընթերցողաց առաւել կամ նուազ եռանդէն. յիշաւի՛ կարծես մեր ուսեայք իսկ լրագիր կը գնեն խառն լրոց համար զգացած հետաքրքրութիւննին յագեցնելու համար միայն, զի աւելի կարեւոր եւ օգտակար խնդիրներ երբեմն լոյս կը տեսնան թողլու համար իրենց հետքերը գիրենք սարունակող սիւնակաց մէջ միայն եւ ո՛չ այլուր:

Բայց պէտք է վերադառնալ բուն մեր խնդրոյն, ուսկից արդէն բաւական հեռացանք:

Մեր լրագրութիւնը լաւ կ'զգայ թէ իւր պարտականութիւնը իւրաքանչիւր անհատի դատարարութեան համար շատ աւելի ընդարձակ է քան ինչ որ է այդ պարտականութիւնը եւրոպական ուրիշ ազգաց մէջ: Տնտեսագիտական խնդրոց նկատմամբ ցուցած համակրութիւնը արժանի է խրախուսանաց:

Գեռ վերջերս «Արեւելք» իւր կարգին նուիրեց իւր ընթերցողաց, ի մէջ այլոց, Հրանտ Էֆէնտի Ասատուրի մի ընտիր տեսութիւնը՝ խնայողութեան եւ խնայողութեան արկեղց վերաբերեալ:

Խնայողութիւնը ըլլալով այն սկզբունքներէն մին՝ զոր մէկէն շատ աւելի անգամներ կ'արժէ քարոզել մեր ազգայնոց, պիտի ջանանք զայն ներկայացնել կերպարանափոխեալ եւ տարբեր դոյներուն ներքեւ, սակայն միշտ իրրեւ հարստութիւն արտագրող գործի:

Թէ ի՞նչ է խնայողութիւնը, — երկար պիտի ըլլար մի առ մի թուել տնտեսագիտաց ըիջ շատ տարբեր բացատրութիւնները. պիտի յիշատակեմ զայն որ լաւագոյններէն մին կրնայ սեպուիլ:

«Խնայել, կըսէ Պասթիա, չնշանակեր մթերել որսի անասնոյ միս, ցորենի հատիկներ եւ կամ դրամ գիգել: Այլոյ եւ հաշուոյ ենթարկեալ առարկաներու այս նիւթական խառն կոյտը, որ ըստ ինքեան կարի սահմանափակ է, մի միայն ընկերութենէ դուրս ապրող մարդուն խնայողութեան գաղափարը կուտայ:

«Խնայել կը նշանակէ յօժար կաւօք անցնիլ միջոց մը այն երկու ժամանակաց մէջ-

տեղ որոց միոյն մէջ մարդ ընկերութեան կը նուիրէ իւր ծառայութիւնները, և որոց միւսին մէջ կը քաղէ ընկերութենէն համարժէք ծառայութիւններ: Այսպէս մարդ մը կրնայ, օրինակի համար, երկտասարդութենէ մինչև ծերութիւնն նուիրել նմանեացը իւր արուեստին վերաբերեալ ծառայութիւններ, որոց արժէքը ենթադրենք որ հաւասար ըլլայ չորսի, և պահանջել ծառայութիւններ հաւասար մի միայն երեքի: Այս պարագային մէջ վերապահած կ'ըլլայ ինքզինքին բաւունք մը, որ է ընդունիլ ընկերութենէն, երբ ինք ծերանայ եւ այլ եւս չի կարենայ աշխատիլ, իւր քառասունամեայ ձգանց քառորդ մասին վճարումը:»

Այս բացատրութենէն առաջ եկող անմիջական հետեւանքը այն է թէ՛ խնայողութիւնը կ'ենթադրէ զրկում: Յիշաւի՛ կօշկակար մը՝ որ ամիսը հարիւր դահեկանի կօշիկ կը հայթայթէ ընկերութեան, եթէ այս ծառայութեան համար առ այժմ մի միայն իննսուն դահեկանի ծառայութիւնն պահանջէ (այսինքն գնելով իննսուն դահեկանի հաց, միս, նալարեղէն ևն), ի՞նչպէս ապրեցնէ ընտանիք մը որ ենթադրենք թէ առ նուազն ամիսը ձիւղ հարիւր դահեկանի կարօտ է: Ահ եթէ երբէք կարենայ խնայել մնացեալ տասը դահեկանը, որչա՞փ երկար ժամանակի մէջ պիտի կարենայ ձեռք ձգել դրամագլուխ մը՝ որ իւր ծերութեան օրերուն հանգիստն ապահովէ:

Իմաստուն մարդիկ, կամ լաւ եւս անոնք որոնց փօրը կուշտ եւ կունակը տաք է (ներուի բացատրութեանս) դիւրաւ կը պոռան «Խնայեցէ՛ք.....» որ է ըսել. «Էջրկեցէք ինքզինքնիդ»: Բայց ինչո՞ւ միեւնոյն ժամանակ օրինակ չեն ցուցներ Թէփայիտի մենակեացները կամ հնդիկ ֆաբրիկները: Վատ սնունդով միթէ մարդ ուժաթափ չըլլա՞ր:

Բաց աստի պէտք է դիտել որ ագահին հարստանալու գլխաւոր միջոցն է ինքզինքը զրկել ո՛չ միայն երկրորդական բայց կարեւոր սէտքերէ, այլ նաեւ չափէն աւելի սահմանափակ չրջանակի մը մէջ գոհացնել իւր ամենահարկաւոր եւ կենսական պիտոյքը: Ագահը ամեն զրկանաց կը տոկայ. մահն իսկ քիչ կը սարսափեցնէ զինքը երբ խնդրը ոսկոյ վրայ է. ամեն անպատուութիւն

յանձն կ'առնու բաւական է որ մետաղը դիզուի մի միայն դիզուելու համար : Ուստի , հարկաւոր է զգուշանալ որ խնայողութիւնը ծաւալելու բարի դիտաւորութիւնը ծնունդ չի տան աղահուծեան նման վատթար մութեանց :

Քաղաքակրթեալ ազգաց մէջ , ուր ճարտարարուեստը և վաճառականութիւնը ամենէն աւելի ծաղկած են , ընկերական առօրեայ խնդիրներէն մէկն է ապահովել գործաւոր դասուն ներկայն եւ ապագայն , առանց ռանկոյս ընելու դրամատեսարց իրաւունքները : Հետեւաբար տնտեսագիտաց ժամերը գրաւող գլխաւոր նիւթերէն մին է հաշտեցնել աշխատութեան եւ դրամագլխայն յարաբերութիւնները , բարձրացնել եւ բարեօրէն առաջնոյն վիճակը , այլ ոչ ի վնաս երկրորդին :

Գործակցութեան գիւտը մեծապէս նըպաստած է տնտեսագիտաց դատին :

Անհատական ձեռնարկութեանց կամ սովորական ընկերութեանց մէջ՝ ուր գործոց վարչութիւնը եւ դրամագլխութիւնը իրարու հետ կը շփոթին եւ կամ սերտիւ միացած են , աշխատաւորին բաժինն է (Apport) միայն իւր բազկաց զօրութիւնը որ կը վարձատրուի մի միայն սովորական վարձքով :

Գործակցութիւնը միջոց մ'է որ մասնակից կ'ընէ աշխատաւորը ձեռնարկութեան վարչութեան եւ ասկից գոյացած շահուն :

Այդու նպատակ ունի . 1. ուղղակի աճեցնել գործաւորին հասոյթները , յատկացնելով անոր իրագործուած շահէն մաս մը : 2. նուազեցնել անոր ծախքերը եւ այսպէս անուղղակի կերպով հասոյթները աճեցնել :

Ուրեմն , երկու տեսակ գործակցական ընկերութիւն կայ . մին արարչական և միւսը սպառման : Առաջին տեսակին մէջ մի եւ նոյն արհեստէ գործաւորներ կը միանան որոնցմէ իւրաքանչիւրը կը դնէ դրամագլխէն իրեն ինկած մասը եւ այսպէս կը ծախուի ձեռնարկութեան գոյացած շահոյց , ինչպէս նաեւ հակառակ սլարագային մէջ կը կրէ առաջ եկած ծախքերը եւ ասոնց հետեւանքը , մինչդեռ սպառման ընկերութեանց մէջ անհրաժեշտ չէ որ գործաւորը արհեստակից ըլլան , այնպէս որ տարբեր արհեստէ անհատներ կրնան ապրիլ իրենց սովորական վարձքով :

Քովը եւ միեւնոյն ժամանակ ո եւ է ձեռնարկի մը մասնակցիլ իբր դրամատէր :

Ամեն սլարագայի մէջ անոնք միայն կըրնան մերձենալ գործակցութեան որոնք արդէն պզտիկ դրամագլխի մը կրցած են կալմել :

Արտադրման եւ սպառման ընկերութեանց պէտք է յաւելիլ լաւի ընկերութիւնները : Ասոնք ալ չեն կազմուիր անպատճառ արհեստակից անդամներէն : Նպատակնին է օգնել սլարագ մը արուեստաւորներու եւ պզտիկ վաճառականներու , որոնց գոյարին է վարկ գտնալ սովորական դրամատուններէն : Ասոնք ամենէն աւելի կը նմանին անհատական սպառման ընկերութեանց :

Գործակցութիւնը ամեն երկրի յարմարած չէ եւ ամեն տեղ հաւասար արդիւնք առաջ բերած չէ :

Անհատական պիտոյից վերաբերեալ սպառման ընկերութիւնները մասնաւորապէս Անգլիոյ մէջ ծաւալած են : վարկի ընկերութիւնները նախամեծար համարած են արտադրման ընկերութիւնները :

Տեսները թէ ինչպէս ծախսելը խնայողութիւն կ'արտադրէ եւ ակնարկ մը նետենք այս սկզբամբ հիմնուած հաստատութեանց յաջողութիւններուն վրայ :

Ընկերակից մը կը գնէ ընկերութեան մթերանոցէն լաւագոյն գնով իրեն պէտք եղած նիւթերը . ընթացիկ գնոյն եւ վաճառաց շահ գնոյն մէջ տեղի տարբերութիւնը կը կազմէ իրագործուած վաստակը : Այս վաստակը կը խնայուի եւ օր մը կ'ըլլայ դրամագլխի մը որով կրնան հիմնուիլ արուեստական մեծ հաստատութիւններ :

Անգլիոյ մէջ գործակցութիւնը երեք շրջան անցուցած է . առաջինը տեւած է 1821 էն մինչեւ 1850 . երկրորդը որ կ'ըսուի ընկերավարական շրջան , տեւած է 1851 էն 1844 . իսկ երրորդը որ կ'ըսուի գործնական շրջան , սկսած է 1844 ին , թուական մը որ երբեք չ'սլիտի մոռցուի գործակցական ընկերութեանց պատմութեանը մէջ , զի 1844 ին է որ հաստատուեցաւ Ռօքտէյլի աշխատաւորաց անուանի գործակցութիւնը :

Այս ընկերութիւնը Անգլիոյ մէջ հիմնուած նմանօրինակ ընկերութիւններէն աւանդէն աւելի յաջող եղած է :

Տասն և մէկ տարիէ ի վեր Ֆիլատելֆիոյ մէջ կայ The Philadelphia Industrial Society անուամբ գործակցական ընկերութիւն մը որ ունի 3,000 ի մօտ անդամ: Անցեալ տարւոյ վերջերը տեղի ունեցած հրապարակային դումարման մը մէջ, նախագահ Պ. Ալֆրէտ Սութընի ծանոյց այս ընկերութեան գործելու եղանակը, գործառնութիւնները եւ ընդհանուր գործողութեանց արդիւնքը:

Ֆիլատելֆիացիք հիմնած են իրենց ընկերութիւնը անգլիական վերայիշեալ հանրածանօթ Ռօքֆէյլի գործաւորաց ընկերութեան ճիշդ օրինակին վրայ: Երկուքն ալ ամենահամեստ ծնունդ ունեցած են, զի ամերիկեան ընկերութիւնը, նման անգլիականին, մի միայն 12 անդամ ունէր երբ իւր առաջին վաճառատունը բացաւ 1873 ին: Սակայն եւ այնպէս ներկայ ժամուս տասնէն ոչ նուազ վաճառատուներ ունի որոնցմէ վեցը կը վաճառեն նպարեղէն, մին աղած ձուկ, երկուքը միս եւ մին կօշկեղէն:

Շաբաթական առեւտրոց ընդհանուր դումարը կը հասնի 25,000 ֆրանքի մօտ: Բաժիններու իւրաքանչիւրին գինն է մէկ տօլար (3 ֆրանք 40) եւ մէն մի անդամ 3 է աւելի բաժիններու տէր չը կրնար ըլլալ:

Բաժիններու վրայ 6 0/0 շահ կը բանի. եւ ամեն անգամ որ ընկերակիցներէն մին ու է բան մը կը գնէ, գնածին համար իրեն կը տրուին նշանագրեր (Chèque). իւրաքանչիւր եռամսոյ վերջը այս նշանագրերուն ամբողջութիւնը կ'ընդունի 3 1/2 էն մինչեւ 7 1/2 0/0 շահ:

Ընկերութիւնը իրեն անդամներէն կ'ընդունի նաեւ դրամական զանազան աւանդներ. մինչեւ 200 տօլարի աւանդի մը համար կուտայ 6 0/0 շահ, իսկ ասկէց աւելի մեծ արժողութեամբ աւանդներ մի միայն 4 0/0 շահ կ'ընդունին:

Ո եւ է առեւտուր կանխիկ դրամով կը կատարուի, եւ ինչ որ ալ ըլլան սլարագայք, ոչ ոք կրնայ ապառիկ վաճառք գնել:

Գ. ՄԱԼԻՍԵԱՆ

(Մնացեալն յաջորդ Էնթու)

ԿՐԹԱԿԱՆ

ԳԵՐՄԱՆԱՅԻ ՈՒՍԱՆՈՂԱՅ

ԹՇՈՒԱՌՈՒԹԻՒՆԸ

Կրթական բարձրագոյն հաստատութիւններ հիմնելու համար Գերմանիոյ ըրած ահագին ծախքերէն յետոյ, կը գուշակուէր թէ այդ մեծահարուստ հաստատութիւնը, այդ հանգստաւէտ գործանոցը եւ ամփոթատրոնք աշխատութեան կեդրոններ պիտի լինէին, որք մեծագոյն փայլ մը պիտի տային գերմանական գիտութեան:

Արդիւնքը բոլորովին տարբեր եղած է. այդ բարւոքումներէն ի վեր, գիտական աշխատութիւնը, փոխանակ նոր մղում մը ըստալու, իրենց թուիչին մէջ կանգ առած են ձախող պարագայի մը պատճառաւ, որ ծանրապէս կ'սպառնայ կրթական մեծ կեդրոններու էութեան. կ'ուզենք խօսիլ ուսանողաց աղքատութեան վրայ, որ օր ըստ օրէ կ'աւելնայ եւ որուն դէմ բան մը չեն կրցած ընել կանոնադրութիւնը:

Ամեն ժամանակ, ուսանողներն, մանաւանդ գերմանացի ուսանողներն, հարուստ եղած չեն: Այլ առաջ, ըստ որում գերմանական համալսարանաց մէջ աշակերտաց թիւը շատ շէր, այդ աղքատ երիտասարդներն այնքան աչքի չէին զարնէր: Երբ իրենց ապրուստի վերջին միջոցներն սպառած էին, կը մուրային. ուստի երսուն տարի առաջ հազուադէպ չէր Պատէնի մեծ դքսութեան մէկ ճանբուն վրայ հանգիպիլ երիտասարդի մը, որ բարեկիրթ կերպիւ կը կեցնէր ուղեւորն եւ ձեռքը կ'երկնցնէր, ըսելով. «Մի' մնա՛նք աղքատ ուսանող մը»: Քանի մը սու կուտային, եւ ուսանողը կը շարունակէր իւր ճանբան:

Ի Ռուսիա, ուսանողաց աղքատութիւնը կրնայ բացատրուիլ սա իրողութեամբ թէ բժշկական վարժարաններն կը յաճախեն ընդհանրապէս ո'չ թէ ազնուական կամ հարուստ երիտասարդք, այլ գիւղացւոց, բահաններու եւ փոքր սլաշտօնատարաց տղաքներ. դաւառներէն կուգան համալսարանական կեդրոններն: Տէրութիւնը կը վըճարէ երիտասարդաց բժշկական կրթու-

թեան ծախքերը, պայմանաւ որ սոքա յանձըն աւանդուն երթալ ժամանակ մը բժշկութիւն ընել Սիպերիոյ մէկ գիւղին մէջ, զորօրինակ:

Այլ, հակառակ ամեն օգնութեանց, աղքատութիւնը մեծ է ի Ռուսիա այդ յոյժ բազմութիւն ուսանողաց մէջ: Այդ թշուառ վիճակին դարման կը տանին փոքր պաշտօններ փնտռելով եւ ի միասին ապրելով: Օրինակի համար, չորս չորս կը միանան եւ սենեակ մը կը վարձեն, ուր յարդէ խըշտեակներու վրայ կը պառկին. ամեն օր անոնցմէ մին ներկայ կը լինի դասախօսութեանց. չորսն ի միասին չեն կրնար երթալ, որովհետեւ միայն մէկ կրկնոց ունին որ ամեն օր մէկուն կ'ունակէն միւսինը կ'անցնի: Իւր խցիկը վերադառնալով, կրկնօցաւոր ուսանողն իւր նոթերը կը հաղորդէ իւր ընկերաց, որը նորա բացակայութեան միջոցին պատրաստած են ճաշը: Օրը մէկ անգամ միայն կը ճաշեն, ճաշ՝ որ կը բաղկանայ ձիւռ մսէ կամ ապուխտէ եւ թէյէ: Այն օրերն ուր ստակ չկայ հասարակաց գրամարկղին մէջ, շուն կամ կատու մը կ'ուտեն զոր ուսանողներէն մին ձեռք ձգած է շրջակայներէն: Այս ընկերակցութեամբ կարելի է ապրիլ շատ ուժան, մէն մի ուսանող ամիսը ծախսելով 25-30 Փրանք:

Այդ թշուառութիւն ի հարկէ մտահոգութիւն պատճառած է ուսու կառավարութեան, որ մէն մի համալսարանի մէջ ուսանողաց թիւը սահմանաւորելու վրայ է, որովհետեւ թշուառաց այդ համախմբումը ոչնչական կամ յեղափոխական հնոցներ ըստեղծելու ծանր անպատեհութիւնն ունի կառավարութեան համար:

Աւելի նոր երկիրներու մէջ, որպէս ի Յունաստան, ուր այժմ կը կազմուի միջնակարգ դաս մը, մերթ ընդ մերթ գիւրապետաց ընտանիքներու մէջ կը տեսնուին տասընեւեց տասնեւութ տարեկան երիտասարդ սպասաւորներ, որը տան մէջ ուտելով եւ բնակելով չնչին ամսական մը կ'ստանան եւ յոյժ թեթեւ աշխատութիւններ կ'ընեն, պայմանաւ որ ամեն օր միջօրէի ժամ ութէն սկսեալ աղատ լինին Համալսարանի ընթացքին հետեւելու:

Այլ այս ամեն ինչ չբաղդատուիր այն ուսանողաց թշուառութեան, որը կը վըլս-

տան գերմանական համալսարանաց մէջ: Խնդիրն արդէն սկսած է մեծ ուշադրութիւն գրաւել եւ երեւելի ուսուցիչներ երկարօրէն խօսած են այդ աղքատութեան վտանգներուն վրայ:

Պէրլինի եւ Վիէնայի լրագրաց մէջ, հազուադէպ չէ կարդալ իրողութիւններ որք ցոյց կուտան մեծ քաղաքաց ուսանողներու մէկ մասին մէջ տիրող խորին թշուառութիւնը: Ի Պէրլին, ուսանող մը թաղապետական վարչութեան պաշտօն մը կը խընդրէ՝ գիշերները փողոցներն աւելու համար, այնպէս որ ցերեկը կարենայ հետեւիլ Համալսարանի դասախօսութեանց, ճարելով հանդերձ իւր ապրուստը: Ի Վիէնա, թափառաշրջութեան համար ձերբակալեալ ուսանող մը քաղաքէն կը վաճառուի, որովհետեւ չկրնար ցոյց տալ թէ ինչով կ'ապրի:

Կալիշիլիա եւ Հունգարիա ամեն տարի Վիէնա կը զրկեն բազմութիւն երիտասարդներ, մեծ մասամբ հրեայ. սոցա ծնողներն, գիւղացիներ կամ մանրավաճառներ, կ'ուզեն գիտուններ ընել զայնս եւ մայրաքաղաք կը զրկեն բժշկութիւն ուսանելու համար: Այդ ուսանողը չնչին գումարներ միայն կ'ստանան եւ ստիպուած են իրենց ապրուստը ճարել, հետեւելով հանդերձ դասախօսութեանց. ուսանը փոքր պաշտօններ կը գտնեն Պորոպին, դրամատանց, թըղթատարութեան կամ հեռագրական պաշտօնատանց մէջ. այլը, ի զուր պաշտօն մը փնտռելէ յետոյ, լուցիկներ ծախելու աստիճանին կը հասնին. ուրիշներ շրջուն երգիչ կը լինին եւ կ'երթան երգել դարեջրատանց մէջ:

Նոյն մանրամասնութիւնը կը յարմարին եւս Պէրլինի, Լայքցիկի, Միւնխէնի եւ ուսանողաց:

Իրենց զբաղմանց պատճառաւ ընդհանրապէս չեն կրնար ներկայ գտնուիլ դասախօսութեանց եւ գործնական փորձերու: Երեկոյին, դասագրքեր կարդալով կը ջանան այդ պակասը լնուլ: Ուրիշներ, նուազ քաջասիրտ, չեն բանար իրենց դասագրքերն եւ դարեջրատանց մէջ կը մտնեն այնքան դժուարութեամբ վաստկուած ստակը:

Ուսանողաց այդ թշուառութիւնն ընկերական խորագոյն վէրք մ'է. սակայն նոր բան մը չէ, մեր դարուն միայն յատուկ:

Առաջ, ժե դարուն, Վիեննայի Համալսարանին աղքատ ուսանողները կը ջանային իրենց ապրուստն հոգալ զանազան միջոցներով, զորս բացարձակապէս կ'արգելուն մեր ժամանակի դադարաբեր: Ոչ միայն քիչ մը ստակ կը շահէին իրր ընդօրինակող, դաստիարակ, կամ կրկնող իրենց հարուստ ընկերակցաց, այլ նաեւ չնչին փոխարինութեամբ մը դարձութիւն կ'ընէին եկեղեցեաց մէջ: ԺՋ դարուն, այդ թշուառաց թիւն այնքան շատցած էր որ Համալսարանին տեսուէն հարկադրեցաւ մուրացկանութեան վկայագրեր տալ նոցա, որք կ'արտօնէին զայնս անցորդները նեղել իրենց երգերով, կամ լուսարարին ետեւէն երթալ երբ նա դրամ կը հաւաքէր, եւ այսպէս քիչ մը ըստակ ձեռք ձգել: Համանման դրութիւն մը ի գործ դրաւ երկար ատեն աւստրիական կառավարութիւնն՝ վարձատրելու համար վիրաւոր կամ անկար ծերունի գինուորներն որք այլ եւս չեն կրնար ծառայել Տէրութեան: այդ տարաբաղդք մուրացկանութեան արտօնագիր մը կ'ստանային, որով իրաւունք կ'ունենային ձանաղարհաց վրայ մուրալ, առանց երկնչելու օստիկանութեան հալածանքէն:

Այն ուսանողներ որ ո եւ է պաշտօն չէին գտներ, ծառայութեան կը մտնէին տանց մէջ. վերջին միջոցն էր այդ:

Համալսարան ունեցող քաղաքները քիչ շատ կ'արգելուն աղքատ ուսանողաց թուոյն աւելնալը մեծ կեղքոններու մէջ, որպէս Վիեննա, Պէրլին, Միւնխէն: Այն երիտասարդն որոյ ընտանիք կը բնակի համալսարանական փոքր կեղքոն մը, նախամեծար կը համարի իրեններուն քով մնալ եւ դաստիասութեանց հետեւիլ իւր քաղաքին մէջ: Գաւառացի երիտասարդներ շատ քիչ անգամ կը մտնեն այդ երկրորդ կարգի համալսարանաց մէջ. անտարակոյս կեանքն աւելի դիւրին եւ աժան պիտի լինէր անդ: Այլ սա յոյսն ունին միշտ թէ ապրուստի աւելի բազմութիւն միջոցներ կրնան գտնել մայրաքաղաքի մը մէջ, ուր բարեգործական ընկերութիւններ հիմնուած են աղքատ ուսանողաց օգնելու նպատակաւ: Արդարեւ փոխադարձ օգնութեան զանազան ընկերութիւններ կազմուած են թէ՛ ուսանողներէ եւ թէ՛ անհատներէ, որք ամեն կեր-

պիւ կ'օգնեն չարաբաստիկ ուսանողին. այլ այդ ընկերութիւնք ի՞նչ կրնան ընել կարօտ ուսանողաց յար աճեցուն բազմութեան դէմ: Հիմնարկութիւնք, կտակք, գթութեան գործեր բազմացած են: սակայն, փոխանակ նուազելու, աղքատութիւնն աւելի մեծ զարգացում մը ստացած է: Այդ ընկերութիւնք բոլորովին կը ջլատին, եւ կամ դէթ շատ անբաւական արդիւնք կուտան:

Բոլոր չարիքն յառաջ կուգայ սա իրողութենէն թէ աղքատ անձինք կ'ուզեն գիտուններ ընել իրենց զաւկները, յուսալով որ անոնք այսու ապահովեն բարեկեցութիւն մը զոր իրենք չեն ձանձաժ: Ուստի հազարաւոր երիտասարդներ, առանց հոգ ընելու նիւթական դժուարութիւնները, կ'երեւակայեն թէ կարող են ընկերութեան ստորնադոյն խաւերէն բարձրանալ առաջին կարգն: Այդ աղքատ թշուառներէն շատեր, իրենց ապրուստն հոգալու միջոց մը վրնտուելէ յետոյ ի զուր, կը վճատին, տակաւ առ տակաւ կը լքանեն ազատ ստպարէզի մը մէջ նետուելու դադարաւրն, եւ երսուն տարեկան հասակի մէջ աւելածու կամ սպասաւոր կը լինին: Ուրիշներ, թշուառութենէն եւ զրկումներէ անասնացած, աւելի կ'ստորնանան եւ դատարկապորտներ կամ չարագործներ կը լինին:

Այդ օրինակ աղքատականութիւն մը (բաժնեւէջ) ուղղակի կ'սպառնայ գիտութեան. այդ աղքատ ուսանողներն, իրենց գիւղերէն եկած, նախնական ոչ մէկ կըրթութիւն ուսած են եւ լուրջ ուսումնասիրութեանց հետեւելու վիճակին մէջ չեն: Ըստ ասութեան Բրոք. Պիլրոթի, աղոնք Կաթարի սագորներ են, անկարող ըմբռնելու այն գիտութիւններն զորս կը ջանան ուսնիլ: Ընդհանրապէս ընդունակ չեն այդ գիտական ուսումնասիրութեանց: Այդ աղքատ ուսանողաց մեծ մասը մտացի չէ: Եթէ հարուստ ուսանողներն ալ այդպէս են, դէթ իրաւ է թէ այդ իրողութիւն անպատեհութիւն մը չունի ընկերական տեսակէտով: Ուստի ներելի է հարցնել թէ անօգուտ չէ՞ աղքատները կոչել բարձր ուսմանց, որք, բացի դրամական միջոցներէն, կը սլահանջեն նաեւ բաւական իմացականութիւն եւ քիչ շատ կըր-

Թուլթիւն : Ի Գերմանիա , մտաւորական սյդ բարեմասնութիւնը ընդհանրապէս հարուստ և դիւրակեաց դասուն քով կը գլուխուն :


Բաց աստի , ամիլիթատրոնները կը լընուն , իրենց բազմութեամբ կը նեղեն լուրջ ուսանողաց աշխատութիւններն եւ յետոյ , երբ ուսումն աւարտելու բազուն ունենան , յոռի բժիշկներ միայն կը լինին :

Տղթոր Ս . . . , որ այս նիւթին վրայ շահագրգիւ յոգւած մը հրատարակած է , կ'ընդունի թէ ժողովրդեան ստորնագոյն դասուն բարձրացման շարժումը կարեւորութիւն ունի երկրին բարօրութեան համար , այլ պայմանաւ որ այդ շարժում տակաւ առ տակաւ լինի : Երեւակայել թէ կուրելի է ի մի ոստիւն խոնարհագոյն խաւերէն բարձրանալ առաջին կարգը , սխալ մ'է եւ ոչ թէ ազգային առաւելութիւն մը :

Բժիշկը կ'ըզրակացնէ խնդրելով որ երիտասարդները վերադարձուն գաւառական Համալսարաններն , ուր գոյութեան պայմանը նուազ դժուար են : Աղբատ ուսանողը կ'ընան , նիւթական նոյն միջոցներով , իրենց աշխատութեանց նուիրել աւելի ժամանակ եւ իրենց ուժերուն լաւագոյնը : Մեծ քաղաքաց Համալսարանը այսպէս կ'ազատին ծանր բեռէ մը :

ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՅ

ՆՈՐԱՎԷՊ



ՄԱՌԻ ՏԷ ՌԱՊԻԻԹԷՆ - ՇԱՆԳԱԼ

Ա .

ՏԵՍԱՐԱՆ ՄԱՀՈՒ

1656 մայիս ամսոյ սկիզբներն էր , օդը յոյժ գեղեցիկ էր . Պուռպիլիի հին դըղեակն լի էր բազմութեամբ , որք եկած էին Սըմիւռէն , միւրն մը հեռու , եւ Էբուստէն , գրեթէ նոյն հեռաւորութեամբ : Մահատիպ լուծիւն մը կը տիրէր այդ ընդարձակ ու հին բնակարանին մէջ : Նրբուղեաց , սենեկաց եւ սանդղոց մէջ երթեւեկողք յուշիկ կը

քալէին , զգուշութեամբ քայլափոխելով իբրեւ թէ ամենափոքր աղմուկ մ'իսկ ընելու կ'երկնէին . որք միմեանց կը հանդիպէին , անխօսուկ կ'ողջունէին զիրար , և եթէ խօսէին խի , ցած ձայնիւ ու տխրագէմ . իրարմէ բաժնուած ժամանակ փոխանակած բարեւնին վիշտ մը կ'արտայայտէր եւ աչք յերկինս կ'ուզողէին :

Միջօրէին իբր չորս ժամ վերջ , կառքի մը շառաչիւնն նոր անձի մը գալուստը կը ծանուցանէր : Գուլանժեան գերդաստանի զինանշանօք կառք մը մտաւ այն երկարածիգ ծառուղին որ կը տանէր մեծ դահլիճը , եւ նախադասութիւն առջեւ կանգ առաւ . արքայի զգեստիւք երիտասարդ մ'եղաւ մէջէն :

— Բարեւ , պարոն Աբբայ Լիվրիի , ըսաւ ծեր սպասուհի մը որ կառքին ձայնը լսելով վազեր եկեր էր :

— Բարեւ , օրիորդ Ռէսդու , պատասխանեց արքան , Պ . Ֆիլիք տը լա Դո՛ւռը :

— Աւաղ , ազնիւ պարոն , պատասխանեց կինն լալով , ըստ կարծեաց բժշկաց այսօր վերջին օրն է , այս առտու հաղորդութիւն առաւ : Պարոնը կը մեռնի ինչպէս որ սպրեցաւ , սուրբ մ'է նա :

— Ո՛ւր է Մառի , հարցուց Լիվրիի արքան հետեւելով օրիորդ Ռէսդուին շատ մը սենեակներու մէջ այնչափ ամայի եւ մթին որ կարծես երեսի վրայ թողուած էին :

— Պարտէզն է կամ արօտավայրն եւ կամ իւր սենեակն , պատասխանեց պառոււր : Փոքրիկ Էմմանուէլին հետ է անշուշտ : Խեղճ տղայ , առ առտէն ի վեր կը խաղայ առանց երբէք կասկածելու իւր հօր մահուան վրայ :

— Իսկ Մառի , հարցուց նորէն արքան :

— Ո՛հ , ան ուրիշ , պարոն արքայ , չը գիտեմ որ ըսեմ ճիշդ թէ ի՞նչ կ'ընէ , այսօր չեմ տեսեր : Այնչափ վառահար ենք որ մօտալուտ դժբաղդ ութենէն զատ բանի չ'ենք զբաղիր :

Այսպէս գնալով , արքան եւ օրիորդն Ռէսդու կարմիր թաւեաց վարագուրի մը առջեւ հասան . օրիորդ Ռէսդու մէկ ձեռքով վարագոյրը վերցուց եւ միւսով նշան ըրաւ որ լռէ :

Ընդարձակ սենեակ մ'էր այն խորն անկողին մը որոյ դամատկեաց վարագոյրներն

բաց էին եւ կը ցուցնէին մեռնելու վրայ եղող մարդու մը դերնած ու հողագոյն դէմքը : Իւր դիմագծից վրայ , զոր մահը չէր այլայլեր , քաղցր ու բարեպաշտ երանութիւն մը կը կարդացուէր . յաճախ նայուածքը կ'ուղղէր ճերմակ փղակրեայ մեծ խաչի մը սեւ թաւի վրայ կախուած . երբեմն ալ այդ սիւրբիչ եւ դեռ շնորհալի նայուածքը զինք չընկալածողներուն կը դարձնէր , եւ իւր դժգոյն շրթները յայնժամ սրտագրաւ ժպիտ մը կ'արտայայտէին որ իւր երիտասարդութիւնը կը յիշեցնէին : Սակայն իւր շնառութիւնն իարձ ու տագնապալից էր , եւ թեթեւ քրտինք մը կը պատէր կապոյտ քներքն ու ձեռքը , որք վերմակներէն դուրս կախուած էին :

Անկողնոյն շուրջը բոլորածեւ նստած էին , լռիկ ու տխուր , տառներկու հոգի , այր ու կին , որք անշարժ կեցած էին , կարծես անկենդան : Հինաւուրց սպասաւորք , սենեկին խորը խոնուած , պատրաստ կը թուէին հնազանդիլ որ եւ է հրամանի : Առ ոտս անկողնոյն , սիրուն աղջիկ մ'իննամեայ , ամբողջ մը վրայ նստած , իր ծնգաց վրայ ունէր հնգամեայ մանկան մը գլուխը որ գորգին վրայ շնորհալի կերպով երկնցած էր :

Մահաբոյր լռութիւն մը կը տիրէր այս գլխոց վրայ , մանկանց վրայ՝ ինչպէս ծերոց , մեռնողին վրայ՝ ինչպէս եւ անոնց՝ որոց դէմքերը կեանք կ'արտաշնչէին . եւ այս սգոյ տեսարան , իրբեւ հակապատկեր յանկուցիչ եւ զուարթ գարնան մը , դեղադուարձ կը լուսափայլէր : Բաց պատուհաններէ կը տեսնուէին դաշտն եւ կանանչագեղ ծառոց կատարներն զորս կ'ոսկեզօծէր ամառնամուտի արեգակն . քաղցր ու մեղմ հով մը պարտիզաց եւ մարգաց անուշ բուրումն կը բերէր . թռչնոց երգէն զատ ձայն չէր լսուեր , ոչինչ աղմուկ՝ բաց միայն ջրաղացի մը ձայնը զոր կը դարձնէին ջուրք սիրուն Սըռէն առուակին : Երկինք դժգոյն ու անուշակ կապոյտ գոյն մը եւ տօնի երեւոյթ մ'ունէր . կարծես պճնուեր էր նոր հոգի մ'ալ ընդունելու համար :

Լիւրիկ արբայ Պ. տը Գուլանժ երեւնալուն՝ բոլոր ներկայք ոտք ելան եւ օրհասական գլխով խոնարհութիւն մ'ըրաւ :

— Ճիշդ ժամանակին կուգար իմ երկու

հրիտակներս ընդունելու , ըսաւ այս վերջին տկար ձայնիւ : Որք պաշտպանեալս եւ զաւակս..... զաւակս..... աւելցուց :

Անկողնոյն ամենէն մօտ նստող տիկին մը ոտք ելաւ , դնաց մանուկն առաւ եւ բերաւ օրհասելոյն անկողնոյն վրայ դրաւ : Այս շարժում արթնցուց մանուկն :

— Հէգ որդեակ..... ըսաւ Պ. Ֆիլիբ տը լա Դուռ..... ա՛հ , իրեն համար է որ կը ցաւի՛ կենացս վրայ , իրեն համար զոր որք կը թողում..... Գուլանժ , ըսաւ արբային դառնալով , — խոստացէք ինձ հայրութիւն ընել Էմմանուէլին..... : Զձեզ բաւականին ճանչնալով դիտեմ թէ հայրական պարտիքը պիտի լնուր Բայց ո՞վ մայրութիւն պիտի ընէ :

— Ե՛ս , ըսաւ մանկական ձայն մը :

Ամենուն նայուածքը դարձաւ յայն կողմ՝ ուստից կուգար ձայնը :

Այն ատեն փոքրիկ աղջիկը , որ փոքրիկ Էմմանուէլին գլուխն ի քուն ծնգացը վրայ առեր էր , ոտք ելաւ եւ ուղղաբերձ , լրջագէտ , անցաւ ներկայից մէջէն , մօտեցաւ անկողնոյն , յարգալից խոնարհութիւն մ'ըրաւ եւ կրկնեց ծանրութեամբ .

— Ե՛ս , խնամակալդ իմ , զաւկիդ մայրիկն ես պիտի ըլլամ :

Փոքրիկ աղջկան հաստատուն ձայնին , խելացի ընթացքին , խոհական կեցուածքին մէջ այնպիսի ապահովութիւն մը կար իւր յանձնառութեան մասին , որ բոլոր ներկայք եւ նոյն ինքն մահամերձ մարդն յապուշ կը թեցան :

— Ուշ դրէք այս աղջկան ըսաւ օրհասին , իւր դողդոջուն ձեռքը փոքրիկ աղջկան խարտեալ մազերուն վրայ դնելով , փոյթ ունեցէք յինքն . օր մը այնպիսի կին մը պիտի ըլլայ որ իր վրայ խօսիլ պիտի տայ :

Այս փոքրիկ աղջիկն , դեռատի ընթերցողք , Մառի տը Ռապիլութէն Շանդալն էր որ յետոյ՝ եղաւ Սէվինէ մարքիզուհի . բայց անցողակի ըսած ըլլանք զայս , առանց իւր մանկութեան պատմութիւնն ընդհատելու :

Այս տեսարանէն ժամ մ'ետք , Պ. Ֆիլիբ տը լա Դուռ մեռած էր , եւ Լիւրիկ արբան երկու մանկանց հետ իւր կառքը նստելով Սիւսի կը տանէր զանոնք , ազատե-

լու համար այն աղեխարչ պատրաստութիւններէն որք թաղման հանդէսէն առաջ կը կատարուէին :

Բ .

ՈՒՐ ՄԱՐԻ ՄԱՅՐԻԿԻ ԴԵՐՁ ԿԸ ԿԱՏԱՐԵ

— Հանդարտ կեցիր, Խմանուէլ, և ձայն մի՛ հաներ մինչեւ որ թղթակցութիւնս աւարտեմ, կ'ըսէր, Պ. տը լա Գուռի մահուընէ մէկ տարի վերջ, Մառի տը Ռապիւթէն առ փոքրիկն Գուլանթ, որ մեծ թիկնաթուռի մը մէջ նստած՝ մէկ ձեռքն կողքապատ հացի շերտ մը եւ միւսն խամածիկ մը, բարձրաձայն կ'երգէր :

— Երկար սիրտի տեւէ՞, հարցուց Խմանուէլ :

— Շատ երկար, պատասխանեց Մառի . այս նամակը կը գրեմ առ Պ. Մէնաթ որ ինձ դէմ բարկացած է, եւ զի իրաւունք ունի, իրմէ թողութիւն կը խնդրեմ Այսպէս ընելու է, զաւակս, երբ մարդ յանցաւոր է . ահա քեզ յոյժ լաւ օրինակ մը կուտամ, օգուտ քաղէ :

— Եւ ի՞նչ ըրիր Պ. Մէնաթին, հարցուց Խմանուէլ կողքապատ հացը խածնելով :

— Չորս օր առաջ օրիորդ Ռէսուլին հետ Բարիզ դնացեր էի ի Նօդր - Տամ, Պ. Մէնաթի հօր տունը : Իւր որդին Պ. Փիլլ ուզեց ինծի Խալէթէնի դաս մը տալ, ես ալ առնուլ չ'ուզեցի . բարկացաւ եւ ա'լ չ'ուզեր հոս գալ :

— Եւ ինչո՞ւ չ'ուզեցիր դաս առնուլ, հարցուց փոքրիկն Գուլանթ այն ձեւով ու ձայնով որով աղայ մը կը խօսի՝ միայն խօսելու համար :

— Քանզի գիտէի թէ Պ. Մարգիլն տը Սէփինէէ հոս էր խնամակալիս հետ, թէ ինծի միշտ գիրք կը բերէր եւ կ'ուզէի զիրենք անյապաղ տեսնել եթէ աւելի խելօք ըլլայիր, Խմանուէլ, զիրս կը կարդայի բեզ :

— Հոգ չ'է, կարդացէր :

— Բայց բան մը չ'սիրտի հասկնաս, տղայ :

— Հոգ չ'է, կարդա՛, գոնէ աղմուկ կը պատճառէ :

Համարեա՛ մէկուն կարդացած ըլլաւ համար, կամ միայն բարձրաձայն կարդալով

գրածն աւելի հասկցուելու համար, Մառի կարդաց :

«Սիւսի, 5 փետրուար 1637 .»

Բայց հազիւ թէ սկսաւ, Խմանուէլ վերսկսեց երգը :

— Ուրեմն, ըսաւ Մառի, Խմանուէլ, մտիկ չ'ես ըներ :

— Երկուքն ի միասին, ըսաւ, աւելի լաւ կ'ըլլայ :

— Լռէ՛, ըսաւ Մառի :

Եւ Խմանուէլ լռելով Մառի վերսկսեց .

«Անդամ մ'ալ կը կրկնեմ ձեզ թէ զի՛րար չենք հասկնար, եւ թէ չատ երջանիկ «էք պերճախօս լինելնուդ համար, զի տա՛ւ «առնց անոր բոլոր ինձ ծանուցածնիդ «կարեւորութենէ զուրկ պիտի սեպուէր . «թէ եւ այս ամենայն սքանչելապէս կարա՛ «գաղութաւ է, սակայն բնաւ չ'եմ ահա՛ «բեկիր, եւ խիղճս այնքան մաքուր կ'զգամ «ձեր ըսածներէն, որ անոր անբժուկիւնը «ձեզ ճանչցնելու անյոյս չ'եմ, սակայն ան՝ «կարելի պիտի ըլլայ այս եթէ զգաք «Զիս ծաղու արժանի կացուցանել կ'ուզէք «ըսելով թէ հետս սրդողած էք միայն, իմ «մեկնելուս համար . եթէ այդպէս ըլլաք, «ոչ թէ ձեր ատելութեան այլ յիմարանցի «պէտք է արժանանայի : Բայց մեծ տարա՛ «բերութիւն կայ եւ չ'եմ հասկնար թէ երբ «մէկը կը սիրենք եւ կուզենք, ի՞նչ հարկ «կայ, այս պատճառաւ, վերջին աստիճան «պաղտութիւն ցոյց տալ զինքը տեսած վեր՝ «ջին անդամներու : Բոլորովին արտասովոր «վարմունք մ'է այս, եւ զի անոր վար՝ «ժուած չ'էի, հարկ է որ չ'ըմեղէք զարմանա՛ «քըս . սակայն կ'աղուչեմ զձեզ հաւատալ «թէ ի շարս այն հին թէ նոր բարեկամաց «որոց վրայ կը խօսիք ինձ, ոչ զոք կը յար՝ «գեմ ու կը սիրեմ որքան զձեզ . ոյր վասն «զձեզ կորուսելու եթէ պարտաւորեալ իսկ «լինիմ, շնորհեցէք ինձ մխիթարութիւնն «ձեր անիրաւութիւնը ճանչցնելու եւ ձեզ «ըսելու թէ դուք էք որ ալ զիս չ'էք սիրե՛ր :

«ՌԱՊԻԹԵՆ - ՇԱՆԴԱԼ»

— Աւելի կը սիրեմ երգս, ըսաւ Խմանուէլ, մեծ հառաչանք մ'արձակելով, երբ Մառի աւարտեց ընթերցումն : Հիմա կըրնամ երգել :

— Այո՛, ըսաւ Մառի գլուխը մանկան կողմը դարձնելով: Բայց ի նեւս այդ փոքրիկ սիրուն դիմաց զոր դեռ նոր կը դիտէր, նամակը վար դրաւ, թափով ոտք ելաւ, Էմմանուէլին դնաց, ձեռքէն բռնեց եւ հայելապատ դրան մ'առջեւ տարաւ: — Կը նայի՞ս հայելիին, պարոնիկ, ըսաւ: Տե՛ս թէ ըրածդ ազնուականի մը վայելո՞ւնչ է, եւ երբ մարդ ֆիլիբ Էմմանուէլ Գուլանթ կը կոչուի՝ անկիրթ տղու մը պէս կ'ուտէ՞ եւ մինչեւ ճակտին վրայ բանդակ կը քսէ՞: Բայց տես, պարոն, տես, թողունք քիթդ, դունչդ, այտերդ..... փոքր եղած ատենս ես ալ նոյնն ըրած եմ, բայց մինչեւ ճակատն ալ աղտոտել ու ճպրել բնաւ չէ պատահած ինձ: Քեզ յանդիմանելուս համար մի՛ արտնջար, պարոն, ես քու մայրիկդ եմ, գիտես, եւ մայրիկի մը պարտքն է յանդիմանել իւր տղան.....: Ես ալ մայրիկ ունենալ կ'ուզէի որ զիս յանդիմանէր. կը հասկնա՞ս, եւ չպիտի նախանձէի մայրիկ ունեցող այլ կանայք վիճակին.....:

— Մայրիկներն իրենց տղաքը յանդիմանելու չեն, պատասխանեց փոքրիկն Գուլանթ միմալով, այլ պէտք է գրկեն.....: Նայէ՛, Տիկին Թուլօնթօն մինչեւ իրիկուն կը դրկէ Դարբիէլը:

— Տեսէ՛ք սա վեց տարու խնոտը ինձի բան կը սորվեցնէ, ինձի՝ որ այսօր տասն տարու եմ, պատասխանեց Մառի, իւր փոքրիկ ձեռք մանկան խարտիչազեղ մազերը շոյելով.....: Բայց ո՛րչափ ալ սրդողիս, միմառ ու խոթոտիս, սիրելի զաւակըս, միշտ պիտի յանդիմանեմ, միշտ պիտի չախեմ քեզ. մինչ մահուան անկողինն էր, խոտաղաց հօրդ, նախկին խնամակալիս, քեզ մայրութիւն ընել, եւ պիտի ընեմ: Իւր մահուան ատեն ըրած այս երդումս պիտի կատարեմ: Վրայդ պիտի հսկեմ. քեզ պիտի մարերմ, սանտրեմ, գրկեմ եթէ խելօք ըլլաս, պիտի ծեծեմ երբ չարութիւն ընես.... եւ եթէ չափազանց չարութիւն ընես, ես գիտեմ ընելիքս:

— Ի՞նչ պիտի ընես, հարցուց Էմմանուէլ:

— Պիտի մեռնի՞մ, ըսաւ Մառի սպառնական եղանակաւ մը:

Բարձրաձայն քրքիջ մը խղեց այս գրեթէ

ողբերգական լուսթիւնը զոր այդ կրկին բառը առաջ բերեր էին սրահին մէջ: Մառի ուժով դէպ ի դուռը դառնալով՝ տեսաւ դեռատի մարդ մը շուրջ երեսնամեակի, աքալի զգեստիւ, որ մէկ ձեռքը դրան վարադոյրը կը բռնէր և միւսով կարմիր մարդկենի տփիկ մը:

Գ.

ՏՂԱՅՔ ԽՐԱՏԵԼՈՒ ԿԵՐՊԸ

— Շատ կանուխ արթնցեր էք, մօրեղբայր իմ եւ խնամակալ, ըսաւ Մառի ներս մտնողին: — Բայց ձեր զուարթութեան պատճառն ի՞նչ է, արդեօք տփիկդ է զոր ունիք ի ձեռին:

— Ա՛յ, ձեր խօսքն է, Մառի, պատասխանեց արքայն, դռնակը թող տալով եւ վառարանին մօտենալով՝ ուր առատ կրակ կը վառէր:

— Այդչափ ծաղրաշարժ ըլլալ չգիտէի, ըսաւ Մառի, տրտմադէմ շրթունքը կրծելով:

— Քեզ չեմ խնդար, սիրելիդ իմ, ըսաւ արքայն, այլ նորագիւտ եղանակիդ, թէեւ քիչ մը չափազանցեալ, որով կը պատժէք տղաքը:

— Աւա՛ղ, յոյժ ազնիւ բարեկամս, ըսաւ Մառի տխրութեամբ, երբ տղայք խելօք չեն՝ իրենց ծնողքը կը վշտացնեն. պէտք է եւ արդար է որ ծնողք ալ փոխարինեն այդ վիշտը, եւ ես՝ մօր մը կորուստէն աւելի խիստ միջոց մը չեմ ձանձնար:

— Սիրելի՛ դստրիկ, ըսաւ արքայն խանդաղատեալ:

Մառի յոյժ պաղուծեամբ աւելցուց.

— Այնքան մեծ վիշտ մ'է որ եթէ Աստուած կամի որ մայր ըլլամ՝ կը պաղատիմ որ այդ վիշտը չ'տայ զաւակացս եւ շնորհէ ինձ չ'մեռնիլ յառաջ քան զնոսա:

— Այսօրուան համար յոյժ տխուր նիւթ մ'է խօսակցութեան, Մառի, ըսաւ արքայն, այսօր կ'աւարտես տասներորդ տարիդ:

— Եւ, ա՛լ պզտիկ աղջիկ մը չ'եմ, այլ մեծ օրիորդ մը, յաւել Մառի շտկուելով եւ խօլոյն ձայնը փոխելով մանկանց յատուկ սիրուն ճկունութեամբ:

— Դու՛ն, Մառի, մեծ օրիորդ մը, գո-

չեց Էմմանուէլ ծիծաղելով: Ինձմէ աւելի հասակաւոր չ'ես, եկո՛ւր շափուինք:

— Մեծ՝ բարձրահասակ չը նշանակէր, տղաս, այլ խելացի, յարեց Մառի պաշտպան ձայնիւ մը: արդ այսօրունէ սկսեալ, թէեւ հասակս երէկունէ բուժաչափ մ'աւելի չէ, կը յուսամ թէ Պ. Մէնաթ, Պ. Շաբլէն եւ մեծ մօրաքեռորդիս Ռօփէ տը Պիւսսի-Ռապիւդէն իմ վրայ խօսած ատենին փոքրիկն Մարի, կամ փոքրիկն Ռապիւդէն եւ կամ փոքրիկն Շանդալ չ'պիտի ըսեն, ինչպէս վերջինն կ'ըսէ յաճախ, Նըվըռէի արքայական դնդին տեղակալի ճոխ երեւոյթովն, այլ իրաւամբ օրիորդն Մառի Ռապիւդէն տը Շանդալ: Կը յուսամ նաեւ թէ մեծ մայրս, Ժան-Ֆռանսուազ Ֆռէմինօ պարոնուհին Շանդալ որ սրբուհի մ'է, որպէս կ'ըսեն, քանզի Այցելութեան հաւատաւորաց կարգին առաջին վանքն ինչպէս եւ նոյն կարգին բազում այլ մենաստաններ հիմնած է..... կը տեսնէ՞ք, խնամակալս, որ մեր գերդաստանն փառաւորող ամէն ինչ ինձ ծանօթ է..... կը յուսամ ուրեմն, վերադառնալով առջի խօսքիս, թէ մամս որ ի Մուլէն, իւր քաշուած վանքէն քեզ ուղղած նամակաց մէջ պիտի գրէ օրիորդ թուանայս, եւ թէ դուք, Պ. Գուլանժիան, արբայ Լիվուի եւ խնամակալդ իմ, զիս պիտի անուանէք օրիորդ քեռորդի, եւ ձեր ծառայք ալ պարզապէս օրիորդ պիտի կոչեն:

— Իսկ ե՞ս, ե՞ս ինչպէս պիտի կանչեմ, ըսաւ փոքրիկն Գուլանժ, որ Մառի խօսած ժամանակ անդադար անոր վրայ յառած էր իւր սեւ խոշոր աչքն:

— Գուլն ալ, Էմմանուէլ, գեղեցիկ հօրաքեռուստրս պիտի անուանես:

— Օ՛ գեղեցիկ ըսաւ Էմմանուէլ ապակեայ չիւսցիներու նման գլուխն օրրելով:

— Ըսել է գեղեցիկ հօրաքեռուստրդ չեմ:

— Այո՛, հօրաքեռուստրս ես, բայց գեղեցիկ՝ ոչ ըսաւ, մանուկն լրջութեամբ:

— Գեղեցիկ ըլլալու համար ի՞նչս պակաս է, յարեց Մառի այնչափ խստութեամբ որ Էմմանուէլ յետո միլուեցաւ:

— Իրաւ որ չգիտեմ.... ըսաւ, երէկ Պ. Պիւսսի տը Ռապիւդէնն էր այսպէս ըսողը....

Մե՛ղք, այդ աղջիկը բնաւ գեղեցիկ չ'պիտի ըլլայ, առ առաւելն հաճելի միայն: Քթէն զատ աղբոր տեղ մը չ'ունի Օ՛հ, Մառի՛, այդչափ խիտ մի նայիր երեսս, Ռապիւդէն մօրեղբայրն այդպէս ըսաւ.....: Աչքը փոքր՝ բայց փայլուն են ըսաւ, բերանը տափակ, ճակատը գունտ..... ասոնցմով մարդ չ'կրնար գեղեցիկ համարուիլ.....: Գարձեալ, եթէ կ'ուզես, գեղանի հօրաքեռուստրս կը կանչեմ, բայց միայն քեզ հաճելի ըլլալու համար եւ պայմանաւ որ դուն ալ զիս պիտի կոչես Պ. Մարգիլըն Գուլանժեան:

— Օ՛, պարոն Մարգիլ զոր պիտի տվենք եթէ խելօք չ'կենայ, գոչեց Մառի զուարթաբար:

— Խնդրէն կը շեղինք, միջամտեց արբայն Գուլանժեան, որ դէմքերնուն ոգեւորիլը տեսնելով կը վախէր թէ խցակցութիւնն աւելի չտաքնայ..... Խնդիրը շէ գիտնալ թէ Մառի գեղանի կամ տղեղ է. Խնդիրն այն է թէ, քիչ մ'առաջ տուած սահմանին համեմատ, ինքն մեծ օրիորդ մ'է:

— Մեծ՝ ըսել է խելացի, ըսաւ Մառի արուեստակեալ լրջութեամբ մը, եւ վեց տարու տղայ մը կա՛մ խելացի է կա՛մ բնաւ չըլլար:

— Ո՛հ, այն ատեն..... ըսաւ Էմմանուէլ գլուխը շարժելով ծաղրալից նրբին ժպիտով մը:

— Խելացութեան առաջին փորձ, մօրեղբայր, ըսաւ Մառի բարկութեան շարժում մը զսպելով՝ պատասխան չեմ տար Էմմանուէլին որ զիս կը ծաղրէ:

— Տեսնենք թէ երկրորդ փորձին ալ տոկա՞ս, յարեց արբայն զանգակը հնչեցնելով: Աղաչեցէ՛ք զՊ. Լըմուան հոս հրամեւ, ըսաւ սպասաւորին, որ զանգակի ձայնին եկած էր:

ԷՅԺԵՆԻ ՖՕՍ

Թաղմ. Ս. ԴԱԻԹԱՆ

(Շարունակել)

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՍՍՅՈՒԱԾՔ

ԱՌԱՄՆԵՐ Ի ՂՈՒԼԹԻՆ ԳԻՒՂ

— Խաթրով բանին, բամբակ կը բուսի.
Խաւն օր խաւ ա, ջուր խմայ, յԱստված
կ'իշկայ.
Խրաւն ինչ տ'ենայ խեւուն, մեղրէ սապոն
սեւուն.
Խօր սօլեր տղին եղի, խէր թօ մեռնի.
Խօսք ջոջին, ջուր սղտկին.
Խղի խաց մարդու փոր չմնար.
Խուժ կաթ ուտողին բախտ չկայ.
Խեւքն ի խմէն պիտի, ճարելով խեւքն ինչ
տ'ենայ:
Խըտ ի գէլուն զգառ կուտեն, խըտ տիրուն
«վալիլէր» կը կանչեն.
Խղի աչք մարդու լուս չի տար.
Խարս վի ձիուն, Աստված վիր խանդիպայ.
Խաց վօշեր ըմեն բան գզիր, մզիր.
Խինք տիրու մութին քաղցր ա.
Խեղն ելաւ, աշն յիստկաւ.
Խաչ տէրն կենայ զօրաւոր.
Խզար սուտ մէկ օղորդ չ'աժար.
Խէրն զտէր կը գտնի.
Խուժի գլորիլ, պտուկ գտիր.
Խիլ ք'աչքէն խան, գերան տկա յ'իմ աչ.
Խեղք ու տօլվաթ մէկտեղ չ'եղիր.
Խնքոտին ծուխն ա պակաս.
Խատուկ իշու նալ պիտի քակայ.
Խեռնութեն ա զ'աշխարհ չէն պախեր.
Խմիր իմ քսան իմ եղիր, խումարցիր չան
քաք եղիր.
Խաւ կայ կուտ չկայ. կուտ կայ խաւ չկայ:
— Ծուռ մի տուն կէր, մէկ էլ երդսէն
ընկաւ.
Ծառ կա՞յ, օր քամի չ'առնի ի նե.
Ծանր նստիր, զիտր է՞գիս.
Ծուռն կոտո՞չ պիտի.
Ծնուկ մուկ մի զինք չի տար.
Ծուռ գիտայ, Պոռայ նախերն ուրն ա.
Ծուռ ջաղաց Աստված կ'աղայ:
— Կթի'կ, քե կասեմ, բարչի'կ դու լա.
Կնիկ սեւ ու ձնիկ.

Կատունն ասին. « Բո աղբ դեղ ա » . ելաւ
նստաւ պատուխան.
Կոտրաւ կուզ, կպաւ շիտակ.
Կտրճի խաց մարդու փոր չմնար.
Կիսուր մեռաւ, տեղ լէնցաւ.
Կեցի'ր, օր զմաղն ու գարին յիստկայ.
Կուշտ չգիտեր, անօթի կայ.
Կուտ կերիր, յ'իս ելիր.
Կոտէն ելիր, կը թքուցայ ի կոտ.
Կարճ նստիր, էրկէն ելիր, էրկէն մի նըս-
տիր, կարճ ելնիր.
Կրունկ կծեն, գադաթ կ'ուռի, ը'.
Կրիքէն ուր կօտէն դուռ չէ.
Կ'ասեմ. « արշ դօ », կասայ. « խե՞տն
ուր ա » .
Կինն ու ձին ու կարմիր գինին զմարդն
յ'արեւէ կը խանեն.
Կերաւ կուզ, ուռաւ աղուէս, դաչ խանին
պատրգուն.
Կաներ Տոփ, կը խաղայ ի Տաշտուի.
Կ'ասրի զրկուկ, չ'ասրի զրկուգ:
— Հայ, գէլու գլխուն Աւետարան կար-
դաց.
— Զիանք զոտներ նալեցին, կրիքէն էլ
վերցին.
Զուկն անփուշ չ'եղիր.
Զուկ բռնողի մէջք կը տղի.
Զուկն յուր գլխէն կը նեխի.
Զկան խաչ կայ ի գլուխն.
Զին ձիու մօտ կապես, եա կծան տի գայ,
եա արցան.
Զեռն օր չկտրուի, կը պագնեն, դնեն վի
գլխուն:
— Զրագ տկին լուս չի տար.
Ճոռն բան գիր, գնա խետն, երա'.
— Մէկ վի նալի, մէկ վի բիբուի.
Մարդ ուր կապետով զուր ոտ կը սլարգայ.
Մէկ մէկով, երկուքն Աստծով.
Մէկի ձեռք ծափ չգաներ.
Մեղբ սամուր քուրք եղի, մարդ վերէն
չ'առներ:
Մարդ օր կայ մեղքի տուն ա.
Մուկը կատուուն վատ երազ կը տեսնայ:
Մէկ կայ խզար կ'աժայ. խզար կայ մէկ
չ'աժար.
Մէկ մէկէլի դարդ չգիտնայ, կէս գիշերին
ձամ կը կանչայ.

Մարդու աչք խողով կը կշտանայ .
 Մարդ կամ զիրաւոր տեղի , կամ խեղճաւոր .
 Մարդ կայ մարդ ա . մարդ կայ յարդ ա .
 Մարդու բնութիւնը խոր կաթին մտիր խոր
 խորունկ տեղի .
 Մարդ ոտով ընկնի , կ'ենի , լեզուով ընկնի ,
 չենի .
 Մարդ մարդուն սատանայ , մարդ մարդուն
 բիհանայ .
 Մարդու աչք երկի , մարդու անուն չենի .
 Միսն անոսկոր չեղիր .
 Մուկ փշու մ'ա . ընկնի կարաս , կը պղծայ .
 Մեղք սեւ ու սպիտակ չէ , մարդ թալայ
 վի թեւերուն .
 Մէկ փոր երկու մունաթ չեղիր .
 Մընը խաւքերուն զագաւան ա սիրեր .
 Մէկ չորթան , շըռտուն երկու ճանկընթան .
 Մէկ չամուլ , մեխանայ կը շինայ .
 Մէկ ի Տոփ , մէկ ի Տաշտոփ (խենդ ու խե-
 լաւ) .
 Մէկն ի դիւան , տասն ի փողան .
 Մանգաղ սուր ա , դաշտ բաժնեւում ա .
 Մէկն ի մախ , մէկն ի խարոնիս .
 Մէրըկ թի ժաժայ , կ'աժայ .
 Մարդ զուր խարիր չկուրուսայ մէկ չգտներ .
 Մարդ խաստ չթողնիր , բարակ բռներ .
 Մարդ կը ծեծեն , « ախ իմ մէջք » , կասայ :
 8 . ՏՈՒՏՈՒԽԵԱՆ

Բաղէշ

ՄԱՍԻՍԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Խ Ն Դ Ի Ր Թ Ի Ի 3

Լ ՈՒԾՈՒՄՆ

Առաջին տակաւին պարունակութիւն
 թող + լիտը ըլլայ եւ երկրորդինն + :

Քանի որ ամբողջ գիննայ քանակութիւնն
 չփոխուիր , եւ ի վերջոյ « լիտը կը մնայ մէկ
 մի տակաւին մէջ , ուրեմն

$$(1) \quad + + \frac{1}{2} = 2$$

Երբ առաջինէն երկրորդին մէջ թափենք
 այնքան լիտը որքան աստ կայ՝ երկու տա-
 կաւայ պարունակութիւնքն կ'ըլլան

$$+ + \frac{1}{2} \text{ եւ } 2 \frac{1}{2}$$

Ապա երկրորդէն առաջնոյն մէջ թափենք
 այնչափ որչափ աստ մնացած էր՝ պարու-
 նակութիւնքն կ'ըլլան

$$2 + - 2 \frac{1}{2} \text{ եւ } 3 \frac{1}{2} - +$$

Ի վերջոյ՝ դարձեալ առաջինէն յերկրոր-
 դէն լեցնելով այնքան որքան աստ կար՝
 պարունակութիւնքն կ'ըլլան

$$3 + - 2 \frac{1}{2} - (3 \frac{1}{2} - +) = 3 + - 3 \frac{1}{2} \text{ եւ } 2 (3 \frac{1}{2} - +)$$

Եւ ըստ որում այս անգամ պարունակու-
 թիւնք կը հաւասարին

$$(2) \quad 3 + - 3 \frac{1}{2} = 2 (3 \frac{1}{2} - +)$$

(1) եւ (2) հաւասարութիւնք առաջին աս-
 տիճանի երկու անձանօթով երկու հաւա-
 սարութիւնք են : (1) էն կը հանենք

$$+ = 2 - \frac{1}{2}$$

Եւ այս + ի հաւասարն կը տանինք (2)ի մէջ
 նորա տեղ

$$3 (2 - \frac{1}{2}) - 3 \frac{1}{2} = 2 (3 \frac{1}{2} - 2 - + \frac{1}{2})$$

զոր պարզելով կ'ըլլայ

$$6 - 8 \frac{1}{2} = 8 \frac{1}{2} - 4$$

$$\text{ուստի} \quad \frac{1}{2} = \frac{5}{8}$$

$$\text{Լապա կը գտնենք} \quad + = \frac{11}{8}$$

Անասնի լեծոյց

1. Օր. Ա. Գ. Գ. Պաղար-պաշի :
2. Կ. Մնացականեան , աշակ . Լ. Վար-
 ժարանի Տրապիզոն
3. Գ. Վարդանեան
4. Օր. Մ. Զօհրապ , Քաղկեդոն
5. Աշակերտուհիք Արամեան Վարժարանի
 Քաղկեդոն
6. Յ. Գ. Իսթանպուլեան , Զմիւռնիա

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՅՆԱՐԿ ՄԸ

Կ. Պոլիս , 6 դեկտեմբեր

Անգլիոյ երեսփոխանական ընտրութիւնք
 իբր մէկ ամիս քաղաքական աշխարհն հե-
 տաբքբեկ եւ ամեն օր յաղթանակն այս
 կամ այն կողմ տարուբերելէ յետոյ , աւար-
 տեցան շարժուս սկիզբն , երբ ընտրական
 վերջին շրջանակի վերջին ընտրողն տուաւ
 իւր քուէն որ պիտի վճռէ Մեծին Բրիտա-
 նիոյ եւ նորա հետ , կրնանք ըսել , ուրիշ
 չափ մը ժողովրդոց բաղդը : Նոր խորհրդ-

դարանն ունի 670 երեսփոխան, որոց 350ն ընտրուեցան Ազատականներէ, 231ը Պաշտօնականներէ եւ 86 ն Իսլամացի ինքնակառավարականներէ:

Այսպէս բացարձակ յաղթանակն ո՛չ մէկ կողմ կը մնայ եւ Պաշտօնականներն ու Իսլամականները միացեալ՝ հազիւ քանի մը ձայնից առաւելութիւն կ'ունենան Ազատականաց վրայ որոց պետն է Պ. Կլատտըրն: Պէտք է խոստովանիլ թէ Իսլամական կուսակցութիւնն իւր այս անակնկալ յաղթանակը կ'ը պարտի Պ. Կլատտըրնի ընտրական վերջին Օրէնքին որոյ զօրութեամբ Իսլամացի երկրագործ դասն աւելի ստուար թուով եւ աւելի ընդարձակ սահմանի մը մէջ քուէարկութեանց մասնակցելու իրաւունք ստացած էր: Կը մնայ գիտնալ թէ ինչ դիրք պիտի բռնեն Իսլամականները որք իրենց քուէներով կոչուած են այս անգամ որոշել Խորհրդարանին մեծամասնութիւնը: Ակնհերեւ է թէ Պ. Բառնէլ այդ կուսակցութեան պետն եւ հոգին, Խորհրդարանի բացումէն անմիջապէս յետոյ որ տեղի պիտի ունենայ 1886 ի սկիզբը, պիտի ներկայէ Իսլամացի վարչային ինքնօրինութեան կամ աւելի ճիշդն ըսելով Իսլամացի քաղաքական ազգութեան մը կազմակերպութեան ծրագիրն, եւ յայնժամ միայն ազգային երկու մեծ կուսակցութիւնը պիտի կոչուին բացորոշ կերպիւ յայտնել իրենց համակրանքն կամ հակակրանքն իսլամական դատին նկատմամբ:

Սպասելով հանդերձ, Պաշտօնական նախարարութիւնն ընդ նախագահութեամբ Լորտ Սալըզպըրիի, պաշտօնի վրայ կը մնայ առ այժմ եւ Ազատականը մեծ փոյթ չեն ցոյց տար զայն տապալելու, ինչպէս երեւցաւ այն յայտարարութիւններէ՝ զորս նախորդ նախարարութեան անդամներէ ոմանք ըրին վերջերս հանրային գումարմանց եւ Քիււպներու մէջ. «Մեք, կըսեն ազատականը, սկզբան խնդիրն ամեն ժամանակ անձնականութենէ վեր դասած ենք եւ չենք ըմբռներ թէ ինչ պատճառ պիտի ունենանք չ'օգնել պաշտօնի վրայ գտնուող նախարարութեան, ո՛ր կուսակցութեան ալ պատկանի այն, գործադրելու այնպիսի միջոցներ որոց վրայ ամեն ոք համաձայն կերեւի»: Միւս կողմէ Լորտ Սալըզպըրի եւս

ի պաշտօնէ՝ յայտարարեց թէ Պաշտօնականները գործոց գլուխ պիտի մնան, թէ եւ չունին բացարձակ մեծամասնութիւն: Ուրեմն Խորհրդարանին բացման պէտք է սպասել, իւրաքանչիւր կուսակցութեան հետեւելիք ուղղութիւնը ճշդելու եւ տեսնելու համար թէ ո՞յց ձեռք պիտի մնայ իշխանութիւնը:

Փարիզի մեծ թերթերէ ոմանք Անգլիոյ եւ Ֆրանսայի այս տարուան ընտրութեանց միջեւ տեսակ մը նմանողութիւն կ'ընեն. ինչպէս որ Իսլամացիք տէր եղան մեծամասնութեան ձայնն որոշելու յԱնգլիա, նոյնպէս ալ Ֆրանսայի մէջ Պատեհականք գրեթէ իրենց ձեռք ունին Հանրապետականաց կամ Միապետականաց մեծամասնութիւնն որոշելու կշիռը: Մինչ Լոնտոնի մէջ կը խորհուի թէ ազատականք եւ պաշտօնականները պիտի միանան Բառնէլեանց դէմ, անդին մեծ մտահոգութիւն կայ թէ Պատեհականք եւ Արմատականք պիտի միանան Ֆրանսական Հանրապետութիւնը կանգուն պահելու: Երկու երկիրներու մէջ ալ անստուգութիւն կը տիրէ թէ նախարարական տաղանդ պիտի ծագի, ըստ որում Պ. Պրիստնի եւ Լորտ Սալըզպըրիի նախարարութեանց պաշտօնի վրայ մնալն հաւանաբար կ'ախում ունենայ երրորդ կուսակցութիւնը կազմող փոքրամասնութեան քուէներէն:

Պ. Պրիստնի նախարարութեան պահպանման գլխաւոր հիմը կը կազմէ սակայն Թոնքինի խնդրոյն ստանալիք երեւոյթը. Խորհրդարանական Յանձնաժողովը շարժուս մէջ չկրցաւ աւարտել իւր տեղեկագիրը, վասն զի Հէրպէնթէ գնդապետին դէմ ծանր ամբաստանութիւններն ու վկայութիւններ լսելէ յետոյ, հարկ դատեց զայն անձամբ իւր ներկայութեան կոչել: Գնդապետը վաղուց մեկնած է Թոնքինէ եւ այս պահուս հասած լինելու է ի Փարիզ: Հետեւաբար յառաջիկայ շաբթուան թողուած է տեղեկագրոյն աւարտումն եւ երեսփոխանական ժողովոյ մէջ այս մասին կատարուելիք վիճաբանութիւնն: Երէկ իրիկուն Հաժախ հեռագիր մը սաչափը միայն կը ծանուցանէր թէ Յանձնաժողովը մտադիր է 19 միլիոն Ֆրանքի վարկ մը քուէարկել տալ Թոնքինեան արչաւանքին համար, փոխանակ

78 միլիոն ֆրանքի՝ դոր կը խնդրէ կառու-
վարութիւնն, եւ այս, ինչպէս յայտնի է,
տեսակ մը մերժում կը համարուի նախա-
րարական առաջարկին:

Ֆրանսացիք ո՛չ նուազ կարեւոր
խնդիր մ'ունին որով պիտի գրադին Թոն-
քինի վիճաբանութենէն անմիջապէս յետոյ,
այն է Հանրապետութեան Նախագահի ընտ-
րութիւնը, վասն զի Պ. Կրէվիի եօթնամեայ
պաշտօնավարութիւնը կը լրանայ 1888ի վեր-
ջը. նոր նախագահի ընտրութեան համար
պահանջուած ձեւակերպութեանց առաջինն
է Քօնկրէի մը կամգութիւնն որ կը պատ-
րաստէ ընտրելեաց ցանկն. այս անգամ կը
խորհուի վերընտրել զՊ. Կրէվի. այս մասին
բնականաբար կարծեացան համաձայնութիւնը
բուռն կերպիւ կարտոյցաւ Ֆրանսա-
կան մամուլն մէջ. Պ. Կրէվիի հակառակորդ-
թերթերը կըսեն « Պ. Կրէվիի վերընտրու-
թիւնն օրինակ մը պիտի լինի ապագային
համար եւ այսու կարելի պիտի լինի որ օ-
րին մէկը նուազ տարեց նախագահ մը ո՛չ
միայն մէկ, այլ երկու երեք անգամներ
վերընտրելի ներկայացնէ ինքզինքն, որով
տեսակ մը սահմանադրական միապետու-
թեան հաստատութիւնը կը լինի: Ուրիշներ
ալ կ'առարկեն Պ. Կրէվիի տարիքը եւ հոգ-
նած ու վատառողջ վիճակն: Իսկ նախա-
գահական թերթերը կը պատասխանեն.
« Ըստ որում բոլոր նախագահը Պօնաբարդ-
ներ չեն կրնար լինիլ, պէտք չկայ չափա-
զանցել վերընտրութեան վտանգն: Միաց-
եալ — Նահանգաց մէջ իւրաքանչիւր նախա-
գահ կրնայ կրկնել իւր ընտրելութիւնն և
այդ մեծ ազգի հանրապետութիւնը չ'վատս-
աւիր այս պատճառաւ և »:

Բայց կանխառն է խօսիլ այս խնդրոյն
վրայ. օրը պիտի դայ որ Ֆրանսացիք յայտ-
նեն թէ իրենց նախարարական անվերջա-
նալի տագնապներուն վրայ պիտի ուղեօն
նախագահական տագնապ մ'ալ աւելցնել,
թէ պիտի չատանան վերընտրելով զՊ. Կրէ-
վի: Յայնժամ առիթ չպակսիր մեզ գրելու
այս մասին:

Անցողակի երկու խօսք ալ Գերմանիոյ
վրայ:

Պիզմարք իշխանն իւր լուրջ ուշադրու-
թիւնը նուիրելով հանդերձ Պալանեան
խնդրոյն, յորում իւր հզօր ազդեցութիւնն

ունեցաւ ի սկզբանէ անտի, միւս կողմէ
Ժամանակ կը գտնէ գրադելու Գերմանիոյ
ներքին գործերով եւ գաղթային աշխար-
հավարութեամբ որ հետզհետէ կընդարձա-
կի: Կարողեան կղզեաց գրաւումէն յետոյ,
Գերմանիա կիւրացնէ Մարշալ կոչուած ար-
շիպիղագոսն ի Նոր Կուլինէա (Ովկէանիա).
այս արշիպիղագոս կը բաղկանայ երեսունի
չափ կղզեակներէ որոց գլխաւորը՝ Ժալիւիթ-
ընտիր նաւահանգիստ մ'ունի եւ առեւ-
տրական մեծ կարեւորութիւն պիտի ստա-
նայ Բանամայի Պարանոցի բացումէն յե-
տոյ:

Ներքին գործոց շարքին մէջ, Պիզմարք
իշխանի մտահոգութեան գլխաւոր ա-
ռարկայն կը կազմէ գերմանական Խորհրդ-
դարանն, ուր զանազան կուսակցութիւնք
առիթ չեն փախցներ Նախարարապետին
Նիդերը զրգուելէ, իրենց հարցումներով հար-
ցապնդումներով ու ծայրայեղ վիճաբանու-
թիւններով: Վերջերս յուզուեցաւ ռուս եւ
աւստրիացի բոլորնացւոց Բրուսիոյ արեւելեան
մասերէն արտաքսման խնդիրն: Նախարարա-
պետն՝ իբր միակ պատասխան այս առթիւ
իրեն ուղղեալ հարցապնդման, կարգաց
կայսերական Պատգամագիր մը որ, ի մի
բան, կը յայտնէր թէ Գերմանական Խոր-
հրդարանի իրաւասութենէն դուրս է այս
խնդիր որ կը պատկանի Բրուսիոյ երեսփո-
խանական ժողովոյ ձեռնհասութեան: Եթէ
Իշխան — Նախարարապետը կայսերական
Պատգամագիր մը բերելու հարկ տեսաւ,
պատճառն ո՛չ միայն խնդրոյն արտասովոր
կարեւորութիւնն էր որուն առջեւ 'գուցէ
այնքան ազդու չ'լինէր նախարարական բա-
ցատրութիւն մը, այլ սա պարագայ թէ
հարցապնդումը կ'ուղղուէր կղերական ե-
րեսփոխանաց կողմէ. եթէ մի միայն ազա-
տական, բոլորնացի կամ աղքատեան երես-
փոխանք ստորագրած լինէին զայն, գուցէ
պէտք չտեսնուէր կայսերական Պատգա-
մագրին, այլ ըստ որում անդրախնայանք
ընդգրկած էին հարցումն, Պիզմարք իշ-
խանն հարկադրեցաւ իւր պատրաստու-
թիւնները տեսնել կանխաւ եւ կրցաւ խեղ-
դել խնդիրը, գէթ առ այժմ:

Բոլորնական խնդրէն առաջ ալ, կղե-
րականք իրենց պետին՝ Տօթթ. Վինդհորսդի
միջոցաւ փորձեցին գիտնալ թէ Ժամանակն

եկած չէ՞ր արդեօք պահանջելու բարձունքն այն Օրէնքին որ ժէզուիդաց գերմանական հողէն արտաքսուածը կը սահմանէ, սակայն չ'աջողեցան իրենց այս ձեռնարկի մէջ, տեսնելով որ նախարարապետն իւր բոլոր ատելութիւնը պահած էր ժէզուիթաց դէմ եւ առաւել քան երբէք տրամադիր չէր երեւէր ո՞ր եւ է գիջողութիւն ընել, արտօնելու համար անոնց մուտքն ի Գերմանիա :

Սակայն ժէզուիթաց եւ Բոլնացեաց արտաքսման խնդիրն, Անգլիոյ ընտրութիւնը, Թոնքինի խնդիրն, եւ այլ քաղաքական հարցեր չեն կրնար մոռցնել տալ Պալքանեան տաղնապն որ սեպտ. 18էն ի վեր զանազան գոյներ առաւ եւ համազգային խնդրոյ մը կերպարանն ստացաւ Շարաթներանցան որ դադարած է Սերպո - Պուլկարական պատերազմն, եւ սակայն ո՛չ Միլան թագաւորի եւ ո՛չ Ալեքսանդր իշխանի զօրավարք չկրցան համաձայնիլ զինադադարի կնքման համար : Ալեքսանդր իշխանն հուսկ ուրեմն հաւանեցաւ որ Բ. Դրան կողմէ եւս ներկայացուցիչը զրկուին ի Սոփիա, սահմանադիրոց գծման աշխատութեան մասնակցելու համար : Այս գործ յանձնուած է Յանձնաժողովոյ մը որ կը բաղկանայ մեծ Տէրութեանց Վիէնայի դեսպանատանց կցորդներէն որք այս պահուս հուս հաւանաբար Բիրոգ հասած լինելու են եւ բանակցութեան սկսած : Այս Յանձնաժողովոյն կընկերանան Մաճիտ փաշա՝ իբր քաղաքական գործակատար եւ Շաքիր փաշա՝ իբր զինուորական ներկայացուցիչ, որք Սոփիա ուղեւորած են : Այս յանձնաժողովէն կ'սպասուի հաշտութեան վերջնական պայմանաց կնքումն որ նախաշաւիղը պիտի լինի Պալքանեան խնդրոյն լուծման : Չմոռնանք յարել թէ ո՛չ Ալեքսանդր իշխանն եւ ո՛չ պուլկար ժողովուրդը վայրկեան մը չեն հրաժարած Միութեան գաղափարէն որուն յարեալ կ'երեւին առաւել քան երբէք : Հաշտութեան կնքման պիտի յաջորդէ Միութեան ընդունելութեան կամ լուծման ծանրալիւ խնդիրն, որոյ ելլը կարելի չէ գուշակել այժմէն :

Ք Ա Ղ Ո Ի Ա Ծ

ՇԱՐԱՊԱԿԱՆ ԼՐՈՅ

29 ՆՈՅՏԵՐԵՐ — 6 ԴԵԿՏԵՄԲԵՐ

Ա Ր Տ Ա Ք Ի Ն

— 0 —

Ալֆոնսօ ԺԲ. Թագաւորին յուղարկաւ թուրեան հանգէսը կատարեցաւ զեկտեմբեր 12ին (Ն. Տ.) մեծ չքով յեկեղեցւոյ Ս. Փրանչիսկեայ, ի ներկայութեան ստուար բազմութեան իշխանաց եւ արտասովոր դեսպանաց, Տէրութեանց կողմէ զրկուած յատկապէս :

Դիտուեցաւ որ հանդիսին ներկայ էին բազմաթիւ կարդինալներ, Արքեպիսկոպոսներ եւ Եպիսկոպոսներ, որք ներկայ գտնուելով այս արարողութեան, փայլուն եղանակաւ մը կ'ապացուցանէին թէ յարեալ կը մնան Արքայական Գերդաստանին եւ Խնամակալութեան :

Համայն Սպանիոյ մէջ կատարեալ հանդարտութիւն կը տիրէ :

— Իտալացիք յանկարծ իւրացնելով Մասովայի եզրկալական նաւահանգիստն, եւ եզրկալտացի կառավարիչը ճամբելով, սրտայուզութիւն պատճառած են Խտիվին, որ դիմած է Բ. Դրան :

— Եզրկատոսէն կը հեռագրեն թէ Սղէֆէնսըն զօրավարն եւ նորա սպայակոյտն ճամբայ կ'ելնեն Սուտանի սահմաններուն վրայ Վատի Հալֆա երթալու համար, ուր զօրավարը պիտի ստանձնէ հրամանատարութիւնը : Զօրք կը զրկուի Նեղոսն ի վեր :

— Հռոմի օսմանեան գործակալը բերանացի բողբ մ'ըրաւ Մասովայի վարչութեան Իտալիոյ կողմէ ստանձնման առթիւ : Իտալիոյ կառավարութիւնը պատասխանեց թէ ձեռք առնուած միջոցը չեն զպշիր Վեհ. Սուլթանին իրաւանց :

— Սուտանի կողմը նոր կռիւներ սկսած լինելով ի մէջ Սուտանցեաց եւ անգլո-եզրկալական զօրաց, անգլ. կառավարութիւնը ձիարալդարէ եւ Մալդայէ նոր զօրք կը զրկէ Եզրկատոս :

— Սըր Հ. Տրեմընտ Ուոլֆի Գահիրէ ժամանումէն յետոյ, Իտալիա դիտողութիւն ըրաւ թէ Մասովայի եզրկալական վարչու-

թիւնը դժուարութիւններ կը պատճառէր հոն հաստատեալ իտալացւոց ուստի խընդ-րեց որ վարչութիւնն իտալական իշխանու-թեանց յանձնուի : Եգիպտոս մերժեց , և Անգլիա հաւանեցաւ այս մերժման , կ'ըսէ Հափաս :

Իտալացիք Մասովայէ դուրս ելնելու միտք չունին , և կը յայտարարեն թէ իրենք ստանձնելով հանդերձ երկրին վարչութիւնը , չեն դաշիր Վեհ . Սուլթանին՝ իբրեւ վեհա-պետ Եգիպտոսի՝ Կարմիր Ծովու այս մասին վրայ ունեցած իրաւանց : Իտալական կէս-պաշտօնական լրագիրք կը հասկցնեն թէ ի-տալիա ստանձնած էր Մասովայի վարչու-թիւնն՝ Անգլիոյ հետ համաձայնութեամբ :

—Նախ Թուրքիա և ապա Եգիպտոս , անգ-լիացւոց արշաւանքէն յետոյ ի Հապէչաստան (1868) ուղած են ստանձնեալ արիւրկեան եղերաց գերիշխանութիւնը մինչեւ ի Մա-սովա : 1874ին , Խտիվն իւր իրաւունքներն հաստատուած տեսնելով դաշնադրութեամբ մը որ Թուրքիոյ վճարեալ հարկը կը յաւե-լուր , Արքէնտուր գնդապետն և ապա Բապ փաշան զրկեց Հապէչաց թագաւորին դէմ որ կ'ուղէր առանձին դաւառ մը կազմել սոյն ծովեղերեայ հողերով որոց աչք ունէր . թէ գնդապետն և թէ՛ փաշան յաղթուելով ետ քաշուեցան , Մասովայի մէջ թողլով եգիպ-տական դրօշակն : Այդ թուականէն ի վեր , քաղաքը կը պահպանուի զօրաց գունդով մը որք մերթ ընդ մերթ կը նորոգուին Գահի-րէէն :

Այժմ իտալացիք առժամապէս տիրեցին անոր և հաստատուած են ի Սուաքիմ զոր իրենց թողած են Անգլիացիք , և ի Մասո-վա՝ զոր թոյլ տուած են որ գրաւեն : Հե-տեաւար Հապէչաստանի ճանրան իտալա-ցւոց ձեռքն է :

Մասովա կը գտնուի 16,000 մէթր եր-կայնութիւն և 500 լայնութիւն ունեցող կղզիի մը վրայ , Արքէնտի ծովախորշին հիւ-սիսային բերանը : Ծովեղերքէն վեր բարձ-րացող խճուղի մը կը միացնէ զայն ցամաքին : 3-4 քիլոմէթր հեռաւորութենէ ջուր կը հասնի անդ և քանի մը խարխուլ տուներ միայն հաստատուած են : Հապէչաստանցիք հոն կուգան վաճառել իրենց բերքերը . շր-ջակայից հողը բարեբեր է : Պաման կոչուած ցեղը կ'ըբաղի վաճառականութեամբ : Սա-

կաւթիւ Յոյներ և իտալացիներ ալ կը նշմարուին և Քրանսական դեր-հիւպատոս մը կայ : Նաւահանգիստը լաւ է , սակայն փո-րանքները կը փոխադրուին տափակ նաւե-րու միջոցաւ որք նեղ քարափի մը վրայ կը կը սարպեն զայն : Կարմիր ծովու նաւա-հանգստաց եգիպտական կառավարիչը բնա-կարան մ'ունի Մասովայի մէջ , ուսկից եր-կու ճանքաներ կ'առաջնորդեն , մին ի Հա-պէչաստան և միւսն ի Քէրէն , և անտի ի Քասալա և Խարդում :

—Աթէնքէն կը հեռագրեն թէ Պ.Թրիքուբի խստիւ պարսաւեր է նախարարութեան քա-ղաքականութիւնն , զոր Պ. Տէլիեանի պաշտ-պաներ է :

Ի վերջոյ , ժողովոյ Նախագահն քուէի դրեր է վստահութեան խնդիրն , որ 67ի դէմ 115 ձայնիւ ընդունուեր է :

—Ամենէն հարուստ Ամերիկացին , որ մի-անգամայն աշխարհի ամենէն հարուստ մար-դը կը համարուի , Պ. Վանտըրպիլտ , յան-կարծամահ եղաւ անցեալ չորեքշաբթի : Պ. Վանտըրպիլտ «Երկաթուղեաց Թագաւոր» կ'անուանուէր . զի Միացեալ Նահանգաց երկաթուղեաց ամենէն կարեւոր ճիւղերուն ամենէն մեծ բաժնետէրն ու նախագահն էր : Իւր հարստութիւն կը հաշուի 200 միլիոն տոլար , (40 միլիոն անգլ. ոսկի , այսինքն մէկ միլեաւ Քրանք ,) մեծ մասամբ երկաթուղ-եաց բաժիններէ բաղկացեալ , և 35 միլիոնն ալ պետական արժեթուղթ : Տարեկան ե-կամուտը 10 միլիոն տոլարէն (այն է՝ 2 մի-լիոն անգլ. ոսկիէն) աւելի էր : Նիւ Եորքի ազնուապետական Հինգերորդ Պոպոային մէջ ունեցած պալատը միայն , դեղարուես-տից գանձերովը զորս կը պարունակէր , 3 միլիոն տոլարի արժէք ունի : Աշխարհիս մեծագոյն պատկերահանից գործերը կախ-ուած կան նոյն պալատան մէկ յատուկ սրա-հին մէջ : Պ. Վանտըրպիլտ կը թողու կին մը և ութ զաւակներ , որք որոշած են ըստ կա-րի չբաժնել այս ահագին հարստութիւն : Պ. Վանտըրպիլտի գործերն յոյժ բարեկարգ լինելով , Նիւ Եորքի Պոպոային վրայ գէշ տպաւորութիւն չըրաւ իւր մահ :

Ն Ե Ր Ք Ի Ն

— 0 —

Էտիքիս խմբագրականաւ մը կը հաստատէ թէ, երէտ Կայսրութիւնէն ա՛յլ եւս կը պնդեն «իրաց նախկին վիճակին վերահաստատման» վրայ: Հասկցուեր է թէ ո՛չ եւս կարելի է քակել պուկարական Միութիւնը: Բ. Դուռն եւս այս տեսութեան կը յարի՝ Լէպիպ և Կատպան էֆէնտիներու քննչական պաշտօնին ելիցն առջեւ: Բ. Դուռն հիմա Տէրութիւններէն կը խնդրէ որ Բուժէլիի խնդրոյն կարգադրման գործնական ծրագիր մը ցուցուի: Այսպէս, Տէրութեանց մէջ ծագած հերձուածը վերջ կը գտնէ, և անգլ. աշխարհավարութիւնը բովանդակ Եւրոպիոյ աշխարհավարութիւնը կը լինի:

— Երգրումէն կը գրեն առ Էտիքիս. — Զինուորական պատրաստութիւնը միշտ կը շարունակեն աստ: Ինքիյալն և 1500 տարւոյ զինուորներն հաւաքելէ յետոյ, այժմ ի գէն կը կոչուին 1501 տարւոյ զինուորագրութեան մարդիկն: Երգինկեանի տեսչութիւնն ստանձնած է 10,000 ձեռք հագուստ մատակարարել, այլ, մինչեւ այն ատեն, զինուորները կը հասնին և ձմրան խստութիւններէն պաշտպանուելու համար ո՛չ համալցեստ կը գտնեն և ոչ այլ ինչ:—Սահմանադրէն անդին, Ռուսք փութանակի յառաջ կը տանին նոր ճամբու մը շինութիւնն, որ Կարսի մեծ ճամբուն մէկ ճիւղը պիտի լինի և պիտի յանգի ի Պաշ-Բէյ, ստորին Բասէնի մէջ: Այդ ճանրով Ռուսք երկու օր հեռի կը լինին Կարինէն: Իրաւ է թէ նոքա պիտի հանգիպին Տէվէ ֆուեուի կիրճը պաշտպանելու համար վերջերս շինուած ամրոցներուն, այլ կ'երեւի թէ մեծ կարեւորութիւն չեն տար այդ շինութեանց: Կըսուի նաև թէ կրնան ուղղակի խնուսի վրայ քալել և անտի Կարին վերադառնալ անուղղակի ճանրով:

—Սէլանիկէն առնուած վերջին լրոց նայելով, հանրային շէնքերու և առանձին բնակարանաց մէջ զետեղեալ պահեստի զօրաց թիւը կը հասնի 20,000ի: Այդ զօրքերը պատրաստ են ի հարկին անմիջապէս ճանբայ ելնել դէպի սահմանադրուին:

—Պ. Ճոն Սէլտըն Վիլմոր Էնկիւրիի և Պ. Հէնրի Տըտլի Պարնհըմ Վանայ անգլիական դեր-հիւպատոս անուանեցան:

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն

Ազգ. Ժողովն իւր երէկի նստին մէջ Երուսաղէմի պատրիարքական ընտրութիւն կատարելով գրեթէ միաձայնութեամբ ընտրեց զՏ. Յարութիւն Պատրիարք, յետ քուէարկելոյ հետեւեալ բանաձեւն:

ԲԱՆԱԶԵԻ

Ս. Երուսաղէմի պատրիարքական ընտրութեան վերջնական քուէարկութիւնը կատարել այսօր յանձին Ամեն. Տ. Յարութիւն Պատրիարքին Կ. Պոլսոյ, բայց Ն. Սրբազնութիւնն առ այժմ Կ. Պոլսոյ աթոռոյն վրայ պահելու և երկուց աթոռոց իշխանութիւններն ի միում անձի չմիացնելու համար յետաձգել ընտրական ճաղաքային ստորագրումն և անոր առ Բ. Դուռն մատուցումը, մինչեւ որ Երուսաղէմի Ս. Յակոբեանց միաբանութեան ներքին Կանոնագրի վերաքննութիւնն աւարտի, և պարագայները ներեն Ամեն. Տ. Յարութիւն Սրբազանի հեռացումը Կ. Պոլսոյ պատրիարքական աթոռէն:

Եւ այս ամենայն այնու պայմանաւ որ՝ Ամեն. Տ. Յարութիւն Սրբազան շարունակէ ցայն վայր Կ. Պոլսոյ Պատրիարքի տիտղոսը կրել, և ոչ Ս. Երուսաղէմայ:

—Էջմիածնէն հետեւեալ տեղեկութիւնները կը հաղորդեն մեզ.

Կաթողիկոսական Օծումէն յետոյ, Էջմիածին ինկաւ իւր նախկին վիճակի մէջ: Ամբարդանեան, որ Կովկասի կառավարչապետի կողմէ կ'ուղեկցէր Վեհ. Կաթողիկոսին Պաթումէն մինչեւ Էջմիածին, մի թանկագին մատանի ստացաւ Ն. Վեհափառութենէն: Այս մատանին կը գտնուէր թանգարանի մէջ և կը պատկանէր Գէորգ Կաթողիկոսին: Մատթէոս Կաթողիկոսի մատանին հանուած է թանգարանէն և Կաթողիկոսն ինքն կը կրէ դայն:

Մի թանկագին մատանի եւս, նոյնպէս թանգարանէն հանուելով, ընծայուեցաւ կառավարութեան ներկայացուցիչ Պ. Պրիբիլին: